ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Թ. ՋՈՒՀԱՐՅԱՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ — 1949

371.8 | 14189
Ջ-89 | Ենիտրյան Բ.
Հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

371.233:91(47.925)
Ջ-89

Թ. ՋՈՒՀԱՐՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ

68144

ԵՐԵՎԱՆ — 1949

А II / 123М

Т. ДЖУГАРЯН

КРАЕВЕДЧЕСКАЯ РАБОТА
В ШКОЛЕ

(На армянском языке)
Ереван, 1949г.

1. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայրենագիտությունը, որը սովորաբար կոչվել է նաև գավառագիտություն, զբաղվում է հայրենի երկրի՝ սեփական մարզի, երկրամասի, շրջանի, քաղաքի կամ գյուղի ուսումնասիրությամբ և հետազոտությամբ։

Գավառագիտությունը, որպես մասսայական գիտա-հասարակական մի շարժում, ունի յուր ծագման ու զարգացման պատմությունը։ Գավառագիտության պատմությունը պետք է բաժանել միմյանցից խիստ կերպով տարբերվող, երկու հիմնական ժամանակաշրջանի, այն է՝ նախասովետական և սովետական ժամանակաշրջանի։

Նախասովետական ժամանակաշրջանում հայրենի երկրի ուսումնասիրման և հետազոտման գաղափարը ստեղծվում և այն կյանքում կիրառվում է ռուսական մեծ ժողովրդի խոշորագույն գիտնական Մ. Վ. Լոմոնոսովի (1711—1765) կողմից։ Նա դեռևս 1760 թվականին ռուսական կայսրության բաբելավված քարտեզը ստեղծելու համար կապ է հաստատում իրենց հայրենի երկիրը լավ իմացող մարդկանց հետ։ Անհրաժեշտ տեղեկություններն ու նյութերը ստանալու նպատակով՝ նա կազմում ու տեղերն է ուղարկում հատուկ անկետաներ, որոնք այն ժամանակվա պայմաններում հայրենագիտական աշխատանքի մի յուրօրինակ ծրագիր էին հանդիսանում։ Այս կերպ նա կարողանում է այդ կարևոր աշխատանքի մեջ ներգրավել իրենց հայրենի երկրին տեղյակ ու բանիմաց մարդկանց և նրանցից ստանալ կարևոր նյութեր ու տեղեկություններ։

Մ. Վ. Լոմոնոսովի այս նախաձեռնությունից հետո Ռուսաստանում աստիճանաբար ստեղծվում են հայրենի երկրի ուսումնա-

սիրմամբ ու հետազոտմամբ զբաղվող ընկերություններ. այսպես օրինակ՝ 1765 թվականին կազմակերպվում է տնտեսական կամավոր ընկերություն, որը յուր մեջ ներգրավում է ժողովրդական տնտեսության զանազան բնագավառներում աշխատող տարբեր մասնագիտությամբ մարդկանց, 1804 թվականին՝ պատմությունը և ռուսաստանյան հնությունները սիրողների ընկերությունը, 1845 թվականին՝ ռուսական աշխարհագրական ընկերությունը, իսկ 1863 թվականին՝ բնագիտությունը, մարդաբանությունը և ազգագրությունը սիրողների ընկերությունը։

Այս ընկերություններից նախավերջինը՝ ռուսական աշխարհագրական ընկերությունը, ունենում է նաև յուր տեղական բաժիններ և ենթաբաժինները. այսպես օրինակ՝ 1850 թվականին բացվում է նրա Կովկասյան բաժինը, 1861 թվականին՝ Արևելյան-սիբիրական բաժինը, 1868 թվականին՝ Օրենբուրգյան բաժինը, 1877 թվականին՝ Արևմտյան-սիբիրական բաժինը և այլն։ 1872 թվականին Թբիլիսիում բացվում է նաև Կովկասի հնագիտությունը սիրողների ընկերությունը, որին մասնակցում են Բայերն, Ա. Երիցյանը, Բագարաձեն, Զագուրսկին, Կոմարովը, Սմիրնովը և ուրիշները։ Այս ընկերությունը բավականաչափ արժեքավոր գիտա-հետազոտական աշխատանքներ է կատարում ինչպես Կովկասի զանազան վայրերում, այնպես էլ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում։

Հայրենի երկրի ուսումնասիրմամբ ու հետազոտմամբ զբաղվող մի շարք կամավոր ընկերություններ են ստեղծվում նաև 20-րդ դարի սկզբներից սկսած։ Այսպես օրինակ՝ 1908 թվականին կազմակերպվում է Սիբիրի ուսումնասիրությամբ զբաղվող ընկերությունը, 1909 թվականին՝ Հյուսիսային երկրի ուսումնասիրությամբ զբաղվող Վոլոգդայի ընկերությունը, 1912 թվականին՝ Կոստրոմայի գիտական ընկերությունը, որն իրեն նպատակ էր դրել ուսումնասիրել սեփական երկիրը՝ Կոստրոման։

Այս գիտա-հետազոտական ընկերությունները հավաքում են բավականաչափ հարուստ գավառագիտական նյութեր, որոնք լույս են ընծայվում առանձին աշխատություններով ու ժողովածուներով։

Բացի այդ ընկերություններից, հիմնադրվում են նաև գավառագիտական թանգարաններ, որոնք հավաքում, կենտրոնացնում և մշակման են ենթարկում հայրենի երկրի ուսումնասիրությա-

ներից ու հետազոտություններից ստացված նյութերը։ Այսպիսով, հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործում կարևոր դեր են կատարում նաև գավառագիտական թանգարանները։

Սակայն բանն այն է, որ նախասովետական ժամանակաշրջանում գավառագիտության զարգացման համար, որպես գիտա-հասարակական, մասսայական մի շարժում, չկային լայն հնարավորություններ ու անհրաժեշտ պայմաններ։ Ցարական կառավարությունը, ինչպես ամեն մի ժողովրդական մասսայական շարժման, այնպես էլ գավառագիտական հասարակական շարժման մեջ տեսնում էր ապստամբության և ռևոլյուցիայի վտանգ։ Այդ պատճառով էլ նա այդ շարժումը պահում էր շատ նեղ շրջանակների մեջ և արգելքներ դնում նրա զարգացման առաջ։ Հենց դրանով էլ պետք է բացատրել այն անառարկելի իրողությունը, որ գավառագիտությունը, չնայած յուր երկարամյա գոյության, նախասովետական ժամանակաշրջանում չէր ծավալվում և չուներ յուր կազմակերպությունների ընդարձակ ցանց։ Մինչև Սովետական իշխանության հաստատումը, գավառագիտական կազմակերպությունների, ընկերությունների, խմբակների, թանգարանների և այլն թիվը 160 միավորից այն կողմը չէր անցնում։ Ինչ վերաբերում է այդ կազմակերպությունների կատարած գավառագիտական աշխատանքին, պետք է նշել, որ նրանց առաջադրած խնդիրները և հետապնդած նպատակները տիրապետող դասակարգերի շահերից վեր չէին բարձրանում։ Ընդհանրապես այդ կազմակերպությունների կատարած գավառագիտական հետազոտումների թեմատիկան անջատված էր հայրենի երկրի կենսական շահերից։ Նրանց կատարած գավառագիտական և գիտա-հետազոտական աշխատանքն ընթանում էր գլխավորապես նկարագրական, բնագիտության, պատմա-կենցաղային հարցերի, հնագիտության, մարդաբանության, հին ճարտարապետության, եկեղեցիական հնությունների և այլն ուսումնասիրության ուղղությամբ։ Մինչդեռ գավառագիտական աշխատանքի ոլորտից փաստորեն դուրս էր մնում այնպիսի հարցերի ուսումնասիրումը, որոնք անմիջականորեն վերաբերում էին բուն հայրենի երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքին և նրա բնակչության գոյության պայմաններին։ Ահա այսպիսի բնույթ ու-

ներ հին՝ նախասովետական ժամանակաշրջանի գավառագիտությունը։

Սակայն գավառագիտության բնույթը, գավառագիտական աշխատանքի բովանդակությունն ու կազմակերպչական ձևերը հիմնովին փոխվում են սովետական ժամանակաշրջանում։ Սովետական իշխանության հաստատմամբ լայն ուղի է բացվում և անհրաժեշտ պայմաններ ու հնարավորություններ են ստեղծվում գավառագիտության գործի զարգացման ու ծավալման համար։ Գավառագիտությունը դառնում է իսկական ժողովրդական մի շարժում, որին մասնակից են դառնում աշխատավորական լայն մասսաները։

Կազմակերպչական տեսակետից շատ մեծ չափով ընդլայնվում է գավառագիտական կազմակերպությունների ցանցը։ Այսպես որինակ՝ սովետական իշխանության առաջին հինգ տարում՝ 1917—1923 թվականներին, գավառագիտական կազմակերպությունների թիվը նախասովետական ժամանակաշրջանի այդ կարգի կազմակերպությունների թվի համեմատությամբ աճում է ավելի, քան 3 անգամ։ 1923 թվականի հունվարի 1-ին գավառագիտական կազմակերպությունների թիվը հասնում էր 516 միավորի, իսկ 1927 թվականին՝ 1.765 միավորի։ Այսպիսով, սովետական ժամանակաշրջանում գավառագիտական կազմակերպությունները գնալով ավելի ու ավելի են աճում ու ընդլայնվում։

Այնուհետև, եթե նախասովետական ժամանակաշրջանում գավառագիտական կազմակերպությունները տեղավորված էին գրեթե հահանգական խոշոր քաղաքներում, ապա սովետական շրջանում այդ կազմակերպություններն արագ կերպով աճում են նաև գավառական ու շրջանային կենտրոններում, ինչպես և ազգային շրջաններում, որտեղ սովետական իշխանության հաստատումից առաջ համարյա թե գոյություն չունեին գավառագիտական մասսայական կազմակերպություններ։

Սկզբում գավառագիտական կազմակերպությունների ղեկավարությունը կատարվում էր Լուսժողկոմատների կողմից, 1945 թվականից սկսած այդ կազմակերպությունների ղեկավարությունն անցնում է կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեներին։

Սովետական շրջանում ամբողջովին փոխվում է նաև գավառագիտական աշխատանքի բնույթն ու բովանդակությունը։ Ի տարբերություն հին գավառագիտության, սովետական՝ նոր գավառագիտությունը, որն ավելի լավ կլինի անվանել սովետական հայրենագիտություն, յուր ուսումնասիրության առարկան դարձնելով հայրենի երկիրը՝ իրեն խնդիր է դնում ամեն կերպ աջակցել նրա տնտեսական ու կուլտուրական զարգացման գործին, նրա սոցիալիստական վերափոխմանը։ Այս նպատակով նա յուր կատարած ամենարազմազան հետազոտումների միջոցով իրական օգնություն է ցույց տալիս տեղական կազմակերպություններին՝ նրանց առաջադրված տնտեսական ու կուլտուրական խնդիրների իրականացման գործում։

Այսպիսով սովետական շրջանում հայրենագիտությունը հանդես է գալիս որպես սոցիալիստական շինարարության կարևորագույն գործոն և նպաստում հայրենի երկրի և հետևաբար, մեր մեծ Հայրենիքի տնտեսական ու կուլտուրական զարգացման գործին։

Սովետական հայրենագիտության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունեցան պարտիայի ու կառավարության մի շարք որոշումները։ Այսպես օրինակ՝ ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի կուլտպրոպի 1930 թվականի նոյեմբերի 13-ի նամակը, նշելով հայրենագիտության պետական ու ժողովրդա-տնտեսական նշանակությունն ու նրա կարևորագույն դերը սոցիալիստական շինարարության գործում, մեծ խթան հանդիսացավ հայրենագիտական շարժման ծավալման ու զարգացման համար։ Այդ նամակում տրված է սովետական հայրենագիտության բովանդակության, հայրենագիտական աշխատանքի հիմնական խնդիրների որոշակի բնութագրումը։ Այնտեղ ասված է. «Սոցիալիստական վերակառուցման ներկա էտապում առանձնահատուկ սրությամբ է առաջ քաշվում արտադրողական ուժերի և կուլտուրայի զարգացման պայմանների ուսումնասիրման ու հաշվառման անհրաժեշտությունը։ Այս աշխատանքը չի կարող կատարվել միայն պետական գիտական հաստատությունների միջոցով, եթե գիտա-հետազոտական աշխատանքի մեջ չներգրավվեն բանվորների, գյուղացիների և սովետական ինտելիգենցիայի մասսաները։ Ներկա ժամանակում այս գիտական աշխատանքը պետք է սերտ կերպով կապել հայրենագիտա-

կան շարժման, այն է՝ սեփական շրջանի, սեփական կոլխոզի, ձեռնարկության հետ»։

Հայբենագիտական շարժման ծավալման ու զարգացման գործում մեծ դեր կատարեց նաև ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի 1931 թվականի մարտի 30-ի որոշումը՝ հայբենագիտական կազմակերպությունների խնդիրների մասին։ Ըստ այդ որոշման, հայբենագիտական կազմակերպության խնդիրները հանդիսանում են՝ «երկրի արտադրողական ուժերի և բնական հարստությունների ուսումնասիրումը, տեղական լրացուցիչ այնպիսի ռեսուրսների հետախուզումը, որոնք կարող են օգտագործվել սոցիալիստական շինարարության զարգացման և երկրի կուլտուրական աճումն արագացնելու օգտին, մասնավորապես բերքատվության բարձրացման, նոր կուլտուրաների տնկման, արտահանման, նոր առարկաների հայտարերման հարցերի ուսումնասիրումը և այլն»։

Հայբենագիտական կազմակերպությունները ելնելով պարտիայի ու կառավարության այդ դիրքավորումներից, իրենց ուսումնասիրումների ու հետազոտումների շրջանակի մեջ ընդգրկում են այնպիսի կոնկրետ ու կենսական հարցեր, որոնք կապված են հայրենի երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման հետ։ Այդ կազմակերպությունների ուսումնասիրումների ու հետազոտումների մեջ են մտնում.

ա) Հայրենի երկրի բնությունը, աշխարհագրական դիրքը, ռելիֆը և սրա ընձեռած հարմարությունները հարևանակից վայրերի կամ միևնույն վայրի առանձին մասերի միջև հաղորդակցման համար։ Հողը, նրա կազմությունը, առանձնահատկությունները, տեսակները, բերրիությունը, պարարտացումը, տեղական պարարտանյութերը և այլն։ Օգտակար հանածոները. հանքավայրերը, հանքերը, նրանց տեսակները, պաշարները, հանույթը, մշակումն ու օգտագործումը։ Լեռնակազմությունը. լեռները, սարերը, բլուրները, բլրակները, բարձունքները, ձորերը, կիրճերը և այլն։ Ջրերը. լճերը, լճակները, գետերը, գետակները, առուները, աուազները, նրանց օգտակարությունը, տնտեսական-արտադրական շահավետությունն ու օգտագործումը։ Կլիման, եղանակը. մետեորոլոգիական երևույթները՝ եղանակի փոփոխումները, օդի ճնշումը, ջերմաստիճանը,

մթնոլորտային տեղումները և այլն։ Ֆենոլոգիական երևույթները՝ լեռների ու գետերի պարբերաբար կրկնվող սառչելը, սառույցի հալոցքը, թռչունների շուն և վերադարձը, բույսերի ծաղկումն ու թառամումը. մետեորոլոգիական և ֆենոլոգիական այդ երևույթների նշանակությունը տնտեսական-արտադրական գործունեության ընթացքում ճիշտ դուշակում և կողմնորոշում ունենալու համար։ Ֆլորան ու ֆաունան (բուսական ու կենդանական աշխարհը). բուսական խմբավորումների տեղաշարժումը՝ անտառներ, մարգագետիններ, ճահիճներ և այլն. բոլոր տեսակի հացաբույսերը, խոտաբույսերը, պտղատու ծառերը, ծաղիկները և այլն։ Գվյալ վայրի ողջ կենդանական աշխարհը՝ ընտանի և վայրի կենդանիները, նրանց տեսակները, տարածման սահմանները և այլն։

բ) Բնակչությունը, նրա ֆիզիկական առանձնահատկությունները՝ հասակը, կեցվածքը, քայլվածքը, շարժ ու ձևերը, թիվը խտությունը և այլն։ Բնակավայրը՝ քաղաքները, քաղաքատիպ վայրերը, ավանները, գյուղերը, կայարանները, յայլաները, նրանց տեղադրությունն ու դասավորումը, ներքին կարգավորումն ու պլանավորումը, Բնակարանը՝ ձևը, արտաքին տեսքն ու ներքին ստոյաբաժանումները, սարքավորումն ու կահավորումը, տնային գործածական զանազան իրերը և այլն։ Վարքերն ու բարքերը. հագուստը, զարդարանքը, կերակուրը, խմիչքը և այլն։

գ) Տնտեսական և կուլտուրական կյանքը. արդյունաբերությունը՝ ֆաբրիկանները, գործարանները, կոմբինատները, արտելները։ Գյուղատնտեսությունը. գյուղատնտեսության արտադրության ճյուղերն ու տեսակները՝ դաշտամշակություն, անասնապահություն, թռչնաբուծություն, որսորդություն, ձկնորսություն, մեղվապահություն, շերամապահություն և այլն. կոլխոզները, սովխոզները, ՄՏԿ-ները։ Տնայնագործություն և արհեստներ։ Առևտուր՝ պետական, կոոպերատիվ և կոլտնտեսական առևտուր, տոնավաճառներ և այլն։

Տրանսպորտը՝ հաղորդակցական ճանապարհներ և փոխադրական միջոցներ։ Արտադրության զարգացումը, աշխատանքի ռացիոնալ կազմակերպումը, արտադրողականության բարձրացումը. արտադրանքի աճումը, պլանների կատարումն ու գերակատա-

բումը։ Արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի առաջավորներն ու նորարարները, նրանց տված փորձը, այդ փորձի մասսայականացումը և այլն։

Ուսումնական և գիտա-հետազոտական հիմնարկներն ու հաստատությունները։ *Գիտությունների Ակադեմիան, համալսարանները, ինստիտուտները, ուսումնարանները, տեխնիկումները, դպրոցները։* Կուլտ-լուս հիմնարկները՝ *կուլտուրայի տները, ակումբները, գրադարանները, կինոները և թատրոնները, թանգարանները և այլն։*

Ժողովրդական ստեղծագործությունները. *վեպեր, պատմվածքներ, հեքիաթներ, առակներ, առածներ, լեգենդներ, մասալներ, ասույթներ, շուտասելուկներ, հանելուկներ, երգեր՝ աշխատանքային, ռազմական, տոնական, կենցաղային, ընտանեկան, պանդխտության, օրորոցի և այլն, երգերի եղանակներն ու մոտիվները՝ երաժշտությունը և երաժշտական գործիքները, պարերը, կերպարվեստը և այլն։ Մեր առաջնորդների՝ Լենինի և Ստալինի, ինչպես նաև ռևոլուցիոն գործիչների և ղեկավար աշխատողների կերպարները ժողովրդական ստեղծագործությունների մեջ։ Տվյալ վայրի բնակչության նյութական և կուլտուրական կյանքի զարգացման ընթացքը։*

դ) Պատմական անցյալը և արդիական կյանքը։ *Հայրենի երկրի պատմությունը, նրա տերիտորիայում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, ռևոլուցիոն և ազգային-ազատագրական շարժումները, գյուղացիական և բանվորական խռովությունները, հուզումները, ապստամբություններն ու ըմբոստացումները շահագործողների դեմ. ռուսական առաջին ռևոլուցիայի, 1917 թվականի փետրվարյան ռևոլուցիայի և հատկապես 1917 թվականի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հետ կապված անցքերն ու դեպքերը. Հայրենի երկիրը, շրջանը, գյուղը, քաղաքը։ սովետական իշխանության հաստատման, քաղաքացիական պատերազմի, ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, սոցիալիզմի կառուցման ավարտման ժամանակաշրջանում և Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին. Հայրենի երկիրը ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետ-*

պատերազմյան շրջանում. նրա զարգացման հեռանկարները ստալինյան նոր հնգամյակում։

Պատմական հուշարձանները և փաստաթղթերը, հին բնակավայրերը՝ քաղաքատեղիները, բերդաքաղաքները, բերդ-շենները, գյուղատեղիները, շենատեղիները, քարայրերը, գետնափոր տները, ցցատները (պալաֆիտ). ամրություններ՝ բերդերը, ամրոցները, ղղյակները, բերդապատերը, աշտարակները, բուրգերը և պատմա-ճարտարապետական այլ հուշարձանները։ Հին ճանապարհները, կամուրջները, իջևանները, հին դրամները, սեպագիր արձանագրությունները, փաստաթղթերը, ձեռագրերը, հուշատետրերը, օրագրերը, քարտեզները, հատակագծերը և այլն. հին աշխատագործիքները, զենքերը, զարդարանքները, զգեստները, տնային իրերը և առարկաները և այլն, և այլն։

Այս կարգի հարցերի ուսումնասիրմամբ ու հետազոտմամբ սովետական հայրենագիտությունը ամենալայն ու ամենաբազմակողմանի կերպով ճանաչելի է դարձնում հայրենի երկիրը, լիամիտի գաղափար տալիս նրա բնության, բնակչության, տնտեսության, կուլտուրայի, պատմական անցյալի, արդիական կյանքի և հետագա զարգացման հեռանկարների մասին։

Սակայն սովետական հայրենագիտությունը յուր այդօրինակ ուսումնասիրմամբ ու հետազոտմամբ հայրենի երկիրը. սեփական մարզը, շրջանը, քաղաքը կամ գյուղը, չի անջատում ու մեկուսացնում յուր ընդհանուր շրջապատից։ Ընդհակառակն, նա հայրենի երկիրը դիտում և հետազոտում է որպես մեր մեծ Հայրենիքի մեկ անբաժան բաղադրամաս։ Այլ կերպ ասած՝ նա հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը կատարում է Սովետական Միության ընդհանրական, ամբողջական կյանքի հետ կապված։

Ինչպես տեսնում ենք, սովետական հայրենագիտությունը շատ մեծ դեր է կատարում մեր երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման գործում։ Սակայն մեզ մոտ սովետական հայրենագիտության դերը դրանով չի սահմանափակվում։ Նա որպես լայն մասսայական գիտա-հասարակական մի շարժում շատ մեծ ու կարևոր դեր է կատարում նաև սովետական աշխատավորության կոմունիստական դաստիարակության, նրանց մտահորիզոնի ընդ-

լայնման և ընդունակությունների ու հակումների զարգացման գործում։

Մաքսիմ Գորկին ասում է. «Մենք պետք է ամբողջապես, մինչև նրա վերջին ատոմը... բաց անենք նրա ընդերքի բոլոր գանձերը, ուսումնասիրենք նրա ստեղծագործական բոլոր ուժերը, նրա բույսերն ու միկրոբները մաթեմատիկորեն այնքան ճիշտ, ինչպես ուսումնասիրում ենք մարդու կյանքը... Հայրենագիտությունը (դավառագիտությունը) մեծ գործ է։ Այդ աշխատանքը ոչ միայն ցույց է տալիս երկրի հարստացման ուղիները, այլև, ինչպես ամեն մի խելացի աշխատանք, մեզ տալիս է բարոյական բավարարություն, օժանդակում է մեր մարդկային արժանապատվության զգացմունքների հետագա զարգացմանը, հավատ է ներշնչում մեր մտքի ստեղծագործական կարողության նկատմամբ»։

Մաքսիմ Գորկու այս խոսքերն ամբողջությամբ վերաբերում են նաև սովետական դպրոցում կատարվող հայրենագիտական աշխատանքին, դպրոցականների ուսուցման ու դաստիարակման գործում նրա ունեցած դերին ու նշանակությանը։ Այդ աշխատանքը դպրոցականներին ամենից առաջ օգնում է ճանաչելու և բազմակողմանիորեն ուսումնասիրելու իրենց հայրենի երկիրը՝ մարդը, շրջանը, գյուղը կամ քաղաքը։ Նա դրանով իսկ դպրոցականների մեջ սեր է արթնացնում դեպի իրենց հայրենի երկիրը՝ մեր մեծ Հայրենիքի անբաժան բաղադրամասը կազմող այն վայրը, որտեղ նրանք ծնվել են ու մեծացել. նա լցնում է նրանց սրտերն իրենց քաջարի նախնիների հերոսական անցյալի և ժամանակակից հայրենակիցների անձնուրաց աշխատանքի ու մարտական սխրագործությունների նկատմամբ հպարտության զգացումով, դաստիարակում է նրանցում սովետական հայրենասիրության հիանալի զգացումը։ Այս կերպ հայրենի երկրի ուսումնասիրումը դարձնում է նրանց անձնվեր հայրենասերներ։ «Հայրենասիրության դաստիարակությունը,— ասում է Մ. Ի. Կալինինը,— սկսվում է յուր (սեփական) հայրենիքի խորը ճանաչումից»։ Նա դպրոցականների մեջ առաջացնում է շատ մեծ հետաքրքրություն դեպի հետազոտական—ստեղծագործական աշխատանքը, նրանցում մշակում ու

զարգացնում է գործնական ու կազմակերպչական շատ արժեքավոր ունակություններ։ Նա հարստացնում ու ամրացնում է աշակերտների գիտելիքները, բազմակողմանիորեն զարգացնում նրանց բոլոր ունակություններն ու հակումները, նրանցում կոփում գիտական ու մատերիալիստական աշխարհայացք։

Դպրոցականների կոմունիստական դաստիարակության և ուսուցման գործում հայրենի երկրի ուսումնասիրման ու ճանաչման ունեցած դերն ու նշանակությունը մատնացույց է արված ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1932 թվականի օգոստոսի 25-ի՝ տարրական և միջնակարգ դպրոցի ծրագրերի ու ռեժիմի մասին կայացրած որոշման մեջ, որտեղ ասված է.

«Անհրաժեշտ համարել հասարակագիտության, գրականության, լեզուների, աշխարհագրության ու պատմության ուսման ծրագրերի մեջ մտցնել ՍՍՌՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրաներին, նրանց գրականությանը, արվեստին, պատմական զարգացմանը վերաբերող կարևորագույն գիտելիքները, ինչպես նաև ՍՍՌՄ-ի գավառագիտության (հայրենագիտության) տարրերը (բնական առանձնահատկություններ, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սոցիալ-տնտեսական զարգացում և այլն)»։

2. ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ՄԵՐ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ինչպես տեսնում ենք, հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը շատ մեծ նշանակություն ունի նաև դպրոցականների ուսուցման ու դաստիարակման համար։

Եվ թվում է, թե մեր բոլոր ժողկրթբաժվարները, դպրոցների դիրեկտոր-ուսմասվարները և ուսուցիչները պետք է խորը կերպով ըմբռնեին դպրոցական կյանքում հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման ունեցած այդ դերն ու նշանակությունը և մեր դպրոցներում ամուր հիմքերի վրա դնեին ու ամբողջ թափով առաջ մղեին հայրենագիտական աշխատանքը։ Սակայն բանն այն է, որ ոչ բոլորն են հասկացել այդ աշխատանքի կարևորությունը դպրոցական կյանքում։ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը նկատի ունենալով այս հանգամանքը՝ ժողկրթբաժվարներին

և դպրոցների դիրեկտորներին ու վարիչներին հատուկ հրահանգ է ուղարկել՝ դպրոցներում հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործի կազմակերպման և բարելավման վերաբերյալ։ Բայց և այնպես հայրենագիտական աշխատանքը, ինչպես հարկն է, շատ տեղերում դեռևս չի թափանցել դպրոցական կյանքի խորքերը և չի դարձել դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի կարևորագույն բնագավառներից մեկը։

Անշուշտ, մեր ռեսպուբլիկայում կան դպրոցներ, որոնք այս կամ այն կերպ ձեռնամուխ են եղել հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործի կազմակերպմանը և այդ ուղղությամբ հասել որոշ դրական արդյունքի։ Այսպես օրինակ՝ Երևանի Մայակովսկու անվան իդական միջնակարգ դպրոցի աշակերտները իրենց դասատուների ղեկավարությամբ բավականաչափ շոշափելի գործ են արել հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գծով։ Նրանք կատարել են կատարել մի շարք հայրենագիտական-հետազոտական աշխատանքներ, կազմակերպել են էքսկուրսիաներ, նշանավոր, շրջագայություններ և այլն։ Բայց այդ, դպրոցի դիրեկտոր Աստղիկ Մաղմանյանի նախաձեռնությամբ ստեղծվել ու գրի է առնվել այս դպրոցի պատմությունը, որը մի շատ հետաքրքրական, արժեքավոր և ուսանելի գործ է։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործում բավական գնահատելի գործ են կատարել Մաքսիմ Գորկու անվան իդական միջնակարգ դպրոցի աշակերտուհիները, հատկապես աշխարհագրության գծով։ Աշխարհագրական խմբակի ղեկավար, աշխարհագրության դասատու ընկ. Կ. Չերքեզյանը նրանց կատարած այդ աշխատանքի մասին գրում է հետևյալը.

«Մաքսիմ Գորկու անվան իդական միջնակարգ դպրոցի աշխարհագրական խմբակի հիմնական նպատակն է եղել ճանաչել հայրենի երկիրը, դիտենալ նրա պատմական անցյալը, երջանիկ արդիական կյանքը և պայծառ ապագան, ծանոթանալ նրա բնությունի՝ դետերի, լճերի, լեռների, հողի, ընդերքի հարստությունների, բուսական ու կենդանական աշխարհի, բնակչության, տնտեսության և այլն, հետ։

Եվ իսկապես մեր աշակերտների համար ինչ բան կարող է ավելի հետաքրքրական լինել, քան հայրենի երկրի ուսումնասիրությունը, ճանապարհորդությունը դեպի հարազատ շրջակայքը, դեպի գեղեցիկ բնությունը։

Հայրենի երկրի ուսումնասիրության ուղղությամբ մեր դպրոցի աշխարհագրական խմբակն յուր գոյության չորս տարվա ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքը. խմբակի նիստերում կարդացվել են հետևյալ զեկուցումները՝ «Հայաստանն անցյալում և այժմ», «Սովետական Հայաստանի բնական պայմանները», «Սովետական Հայաստանի հանքային հարստությունները», «Սովետական Հայաստանի հանքային աղբյուրները», «Սովետական Հայաստանի բնակչությունը», «Սովետական Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը, անցյալում, այժմ և ապագայում», «Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը ստալինյան նոր հնգամյակում», «Սովետական Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները», «Սևան Զանգու-կասկադը», «Սովետական Հայաստանի ճանապարհները և ճանապարհաշինարարությունը» և այլն, և այլն։ Մի շարք զեկուցումներ են կարդացվել նաև Սովետական Վրաստանի և Սովետական Ադրբեջանի, ինչպես և Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման, նրա մայրաքաղաք Մոսկվայի, մեր գիտնականների կատարած գիտական ուսումնասիրությունների և այլնի մասին։ Բացի այդ էկրանի վրա ցուցադրվել են ինչպես Սովետական Հայաստանի, այնպես էլ ՍՍՌՄ զանազան տեսարանները։

Մեր դպրոցի աշխարհագրական խմբակը չբավարարվելով դրանցով՝ կազմակերպել է բազմաթիվ էքսկուրսիաներ։ Խմբակի անդամները եղել են գեոլոգիական, կոմունալ, ժողտնտեսության, ագրոնոմական, կերպարվեստի թանգարաններում և ցուցահանդեսներում, դիտել են հայրենի երկիրը պատկերող բազմաթիվ կինոնկարներ. նրանք շրջել են Երևանի արդյունաբերական և նոր կառուցվող թաղամասերը, եղել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում, ուսումնասիրել են Ջերժինսկու անվան դաշտահանգործիքաշինարարական, կարբիտի, ձեթ-օճառի, Արարատ և այլ գործարանները. դիտել են Երևանի մնացած համարյա բոլոր գործարանները և նորակառույցները. եղել են ընկեր Ստալինի անվան

ջրանցքի ակունքում, անցել են հաղթանակի կամուրջի վրայով և այն համեմատելով հին կամուրջի հետ՝ զգացել են սոցիալիստական շինարարության առավելություններն ու վիթխարի ուժը. եղել են Քանաքեռում, Քանաքեռդէսում, Ալյումինշինում, Արզնիում, Կարմիր բլուրում, Էջմիածնում. դիտել են Զվարթնոցը, Այղր լիճը և ջրհան կայանը, եղել են Սևանում և նավով շրջել են կղզու շուրջը, այցելել են նաև Գառնի, Գեղարդ և այլ պատմական վայրեր։

Այս ամենից բացի, աշխարհագրական խմբակի անդամները եղել են նաև եղբայրական Վրաստանի մայրաքաղաքում՝ Թբիլիսիում, տեսել են քաղաքի տեսարժան բոլոր վայրերը՝ Հավլաբարի գաղտնի տպարանը, Մետեխի բերդը, Զոոպարկը, Բուսաբանական այգին, Դավթի սարը, բոլոր թանգարանները և այլն։ Նրանք եղել են նաև ընկեր Ստալինի ծննդավայրում՝ Գորիում։

Այս տարի նախատեսված է կազմակերպել հեռավոր էքսկուրսիա հետևյալ մարշրուտով՝ Երևան—Թբիլիսի—Բաթումի—Օդեսա — Կիև—Մոսկվա —Դոնբաս—Ռոստով— Ջաու— Ջիդաու—Կրեստովի լեռնանցք—Թբիլիսի—Երևան։ Այս ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներն արդեն կատարվում են։

Դպրոցում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման գործում շատ մեծ ու գովելի նախաձեռնություն է հանդես բերել Երևանի № 28 իգական միջնակարգ դպրոցի դիրեկտոր ընկ. Ա. Տոնոյանը։ Նրա դպրոցում գործում են հայրենի երկիրն ուսումնասիրող 3 խմբակ՝ տարրական դասարանների, 5—7-րդ դասարանների և 8—10-րդ դասարանների համար առանձին-առանձին։

Ընկեր Ա. Տոնոյանի դպրոցի աշակերտուհիները զբաղվել են Երևան քաղաքի արդյունաբերական կյանքի ուսումնասիրությամբ, այս նպատակով նրանք էքսկուրսիա են գնացել մեր մայրաքաղաքի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ, ինչպես օրինակ՝ ապակու գործարանը, կոնսերվի գործարանը, ձեթ-օճառի գործարանը, կարբիտի գործարանը, տպարանը և այլն։ Նրանք էքսկուրսիա են գնացել նաև մեր ռեսպուբլիկայի զանազան վայրերը՝ Մաղկաձոր Սևան, Էջմիածին, Դվին, Գեղարդ և այլն։

№ 28 դպրոցի աշակերտուհիները այցելել են Երևանի ռևոլուցիոն, կոմունալ և պատմական թանգարանները և այնտեղ ծանոթացել իրենց հարազատ քաղաքի պատմական անցյալի և արդիա-

կան կյանքի վերաբերյալ եղած նյութերի հետ։ Նրանք ուսումնասիրել են Երևանի առանձին մասերի և փողոցների պատմությունը։

Աշակերտուհիների կատարած այս ինքնուրույն աշխատանքների մեջ նշանավոր է մանավանդ Ստալինյան պողոտայի պատմությունը, որի վրա և գտնվում է նրանց սիրելի դպրոցի շենքը։ Նրանք այցելել են Երևանի Կենդանաբանական և Բուսաբանական այգին և զանազան այլ վայրեր։

Այդ դպրոցի աշակերտուհիները ուսումնասիրել են նաև հայրենի երկրի նշանավոր մարդկանց կյանքն ու գործունեությունը։ Նրանց կատարած այս կարգի աշխատանքների մեջ ամենաարժեքավորն ու նշանավորը, որ նրանք կատարել են լեզվի և գրականության դասատու Գ. Ալեքսանյանի ղեկավարությամբ, մեր մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունն է։ Նրանք ամենից առաջ ուսումնասիրել են Խ. Աբովյանի կյանքն ու գործունեությունը, այնուհետև գնացել են Քանաքեռ՝ Խ. Աբովյանի տուն-թանգարանը, որից հետո ամփոփելով ուսումնասիրած և հավաքած նյութերը, լույս են ընծայել պատի թերթ, նվիրված Խ. Աբովյանին ու գործունեությանը։ Բացի այդ, նրանք կազմել են Խ. Աբովյանի կենսագրական իլյուստրացիան, որը մի գեղեցիկ ու արժեքավոր գործ է։

Խ. Աբովյանի կյանքի ու կենսագրության ուսումնասիրությունը դպրոցականների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել, մանավանդ այն բանի շնորհիվ, որ այս ամառային արձակուրդների ընթացքում կազմակերպված էքսկուրսիայի ժամանակ նրանք գնացել են նաև Դորպատ և այցելել այն համալսարանը, որտեղ ուսանել է Խաչատուր Աբովյանը։

Այդ էքսկուրսիայի կազմակերպումը վերին աստիճանի հետաքրքրական, արժեքավոր և ուսանելի մի գործ է։ Նա կարող է օրինակ ծառայել մյուս դպրոցներին այն բանի համար, թե ինչպես Հայրենի երկրի ուսումնասիրումը պետք է աստիճանաբար ընդլայնել և հասցնել մինչև մեր մեծ Հայրենիքի լիովին ճանաչմանը և ոչ թե սահմանափակվել միայն Հայրենի շրջանի, քաղաքի կամ գյուղի շրջանակով։ Այս տեսակետից արժեքավոր և ուսանելի համարելով № 28 իդական դպրոցի նախաձեռնությունը՝ այստեղ դնում

ենք վերոհիշյալ էքսկուրսիայի մասին ընկեր Ս. Տոնոյանի գրած զեկուցագրի համառոտագրումը։

«Մենք՝ № 28 դպրոցի մի խումբ ուսուցիչներս և աշակերտներս, թվով 29 հոգի, նախապես կայացրած որոշման համաձայն, 1948 թվի հուլիսի 14-ին դուրս եկանք մեր լայնածավալ Հայրենիքի՝ մեզ հետաքրքրող վայրերը ուսումնասիրելու՝ նշանաբան ընդունելով «Պրավդա»-յի հետևյալ իմաստալից խոսքերը. «Սիրել մեր մեծ, ազատ հայրենիքը, նշանակում է դիտենալ նրան, հիացքրքրվել նրա անցյալով, պարծենալ նրա պայծառ, հերոսական լեռներով և ատել նրան ճնշողներին, տանջողներին»։

Այս նշանաբանով մեր խումբը հուլիսի 19-ին շատ բարձր տրամադրությամբ հասավ հերոսական Լենինգրադ քաղաքը, որն առաջին իսկ հայացքից մեզ երևաց վեհ, գեղեցիկ և թվաց անչափ հարազատ ու նույնիսկ ծանոթ, թեև մեզանից շատերն առաջին անգամն էին լինում այնտեղ։

Լենինգրադն ու նրա արվարձանները, ուր մենք եղանք, իրենց սքանչելի ու բազմաթիվ փողոցներով, շենքերով, հրապարակներով, թանգարաններով, յուցահանդեսներով, կամուրջներով, կամարներով, հուշարձաններով, որոնց մի մասը ավերվել էր բարբարոս թշնամու ձեռքով, մեզ վերապրեցրին, կինոժապավենի վրա մեր աչքի առջևով անցկացրին Մեծ Լենինի անունը կրող այդ հերոսական քաղաքի պատմությունը, նրա հեռավոր ու մոտիկ անցյալը։

Ահա Նեվսկի պրոսպեկտը. մեր աչքի առջևով կինոժապավենի նման անցնում են ռևոլուցիոն անցքերի ու դեպքերի պատկերները. ահա բանվորական հոծ մասսաների շարժումը, որ հուզումնահարող նևայի նման հոսում, հորդում է դեպի Ֆինլանդիական կայարանը, ուր երևում է Մեծ Լենինը... Նա կանգնած է զրահագնացքի վրա, արևապայծառ դիմքով, ճառ է արտասանում, աշխատավորական մասսաներին վճռական մարտի կոչում... Նրա ձայնը մեզ հարազատ է, մեր սրտին մոտ... Մենք հմայված ենք, էլեկտրականացած ու հուզված...

Ահա և Սմոլնին՝ ռևոլուցիայի այդ սուրբ օջախը, այստեղ են ռևոլուցիայի առաջնորդներ Լենինն ու Ստալինը, այստեղ են

ռևոլուցիայի մարտիկները... Բարձրանում է ռևոլուցիան, կործանվում են հին կարգերը, հաստատվում է Սովետների իշխանությունը, սկսվում է նոր, սոցիալիստական երջանիկ կյանքը, պատկերվում են խաղաղ աշխատանքի ու շինարարության տարիները...

Եվ ահա վրա է հասնում պատերազմը... Լենինգրադի վրա սև ամպ է կախված, բայց անվեհեր են ու աննկուն հերոսական քաղաքի հերոս մարտիկները. նրանք կրծքով պաշտպանում են իրենց հարազատ քաղաքը, նրա վրայից ցրվում է սև ամպը, պարտվում է անարգ թշնամին. Լենինգրադը նորից շնչում է ազատ, լիաթոք։ Լենինգրադցիների ստեղծագործ ձեռքով, նրանց անձնազոհ աշխատանքով վերականգնվում է թշնամու ավերածությունից տուժած քաղաքը, ամենուրեք ժպտում է կյանքը, հորդում ստեղծագործ աշխատանքը... Մենք շրջում էինք այդ հերոսական քաղաքում, շրջում ամենուրեք և մի առանձին կարոտանքով, սիրով ու ակնածանքով դիտում մեր շուրջը, նայում ամեն ինչ և տարվում, հափշտակվում նրա հրաշալիքներով։

Լենինգրադում 9 օր մնալուց հետո, մենք մեկնում ենք Էստոնիա՝ Տալին։ Ահա մենք Տալին կայարանումն ենք։ Մեզ դիմավորելու էին եկել քաղաքի № 8 դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները, որոնց հետ մենք առաջուց նամակագրություն ունեինք։ Մենք ջերմորեն ողջունում, համբուրվում և գրկախառնվում ենք միմյանց հետ։

Տալինը ոչ մեծ, բայց հնամյա, մաքուր, կանաչաղարդ մի գեղեցիկ քաղաք է։ Այնտեղ մնացինք 6 օր։ Դիտեցինք նրա թանգարանները, ցուցահանդեսները, ասպետական հնօրյա կերտվածքները։ Եղանք նրա շրջակա ամառանոցային վայրերում, ուր մեզ հյուրասիրության տարան № 8 դպրոցի ուսուցիչները։ Եղանք և մոտիկ ծովափում, որտեղ ծովի հրաշագեղ տեսարանի հետ միասին մեզ գրավեց, հիացմունք պատճառեց Ջրահարս կոչված հոյակապ, հսկայակերտ հուշարձանը։

№ 8 դպրոցի ուսուցիչների և աշակերտների հետ կազմակերպեցինք հանդիպման և հրաժեշտի երեկույթներ։ Մեր հրաժեշտը բավական սրտաշարժ էր ու հուզիչ։ Նրանք մեզ ճանապարհ դրին ծաղկեփնջերով։

Տալինից հետո մենք գնացինք Դորպատ (Տարտու), որը Էստոնիայի համալսարանական քաղաքն է և մեզ համար ևս անչափ հարազատ։ Առավոտյան վաղ Դորպատի կայարանում ծաղկեփնջերով և ուրախ տրամադրությամբ մեզ դիմավորում է պիոներների մի մեծ խումբ։ Նրանք մեզ ուղեկցում են իրենց պիոներական ակումբը, ունենում ենք հանդիպման երեկույթ, ուր ռուսերեն, էստոներեն և հայերեն լեզուներով ասվում են ողջույնի, շնորհակալության խոսքեր, լինում են արտասանություններ ու երգեր։ Վերջում նրանք մեր պիոներներին նվիրում են իրենց պիոներական աշխատանքները պատկերող ալբոմ։ Այնուհետև նրանց ղեկավար կազմի ուղեկցությամբ մենք գնում ենք քաղաքի հետ ծանոթանալու։ Դորպատը խոշոր, ծառերով պատած, ղրոսավայրերով հարուստ, փոքր ինչ ցածրադիր վայրում տեղավորված մի դեղեցիկ քաղաք է։ Երկար շրջելուց հետո, մենք կանգ ենք առնում մի հնօրյա՝ երեք հարյուր տարվա պատմություն ունեցող գրադարանի շենքի առաջ և ներս մտնում։ Գրադարանում մեզ ուղեկցում է նրա աշխատակիցներից մեկը և տալիս համապատասխան բացատրություններ ու սիրով պատասխանում մեզ հետաքրքրող հարցերին։ Խոսակցության ընթացքում պարզվեց, որ այդ գրադարանն ունի աշխարհի բոլոր լեզուներով հրատարակվող գրքեր, որոնց ընդհանուր թիվը մեկ միլոնից անցնում է։ Մենք հետաքրքրվեցինք գրադարանի հայկական բաժնով և գտանք այնտեղ հայերեն հին ու ժամանակակից հարուստ գրականություն։ Մի շարք տեղերում լինելուց հետո, վերջապես մենք մոտենում ենք Դորպատի համալսարանի շենքին, ուր 6 տարի ուսանել, խորհել ու հուզվել է մեր մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Մենք խորին ակնածանքով մտնում ենք սյունազարդ կամարներից ներս, այն կամարներից, որոնց ներքո շատ անգամ սրտի ջերմ տրոփյունով էլ ու մուտ է արել մեր մեծ հայրենասերն ու լուսավորիչը։ Այստեղ ամեն մի քար ու սյուն, ամեն մի պատ ու դուռ Աբովյանի ուսանողական կյանքի դարավոր համր վկան է հանդիսանում։ Ով դիտե, քանի-քանի անգամ երիտասարդ Աբովյանի զանգակ ձայնն է հնչել այս կամարների տակ, քանի-քանի անգամ նա բացել է այս դուռն ու ներս մտել, քանի-քա-

նի անգամ նա կոթնել է այս պատին ու մտածել Հայաստանի ու հայ ժողովրդի աղատության մասին։

Մենք ծաղիկներ փռելով հինավուրց համալսարանի մուտքի առաջ՝ ներս ենք մտնում Աբովյանի ծանոթ դահլիճներն ու լսարանները։ Աբովյանի անունը հայտնի է ամենքին, և ամենքը գիտեն, որ այժմ հայ ժողովուրդը պատրաստվում է նշելու այդ համալսարանի հռչակավոր ուսանողի մահվան 100-ամյակը։

Դուրս գալով համալսարանից՝ մենք ուղևորվում ենք դեպի այն դարավոր ծառը, որի տակ շատ ու շատ անգամ նստել է մեր մեծ լուսավորիչը ու դաս պատրաստել։ Ով գիտե, թե այդ ծառի տակ նստած որքան է ոգևորվել նա ու գրել իր հայրենասիրական երկերի նախնական վարիանտները։

Հրաժեշտ տալով համալսարանին, մենք գնում ենք Աբովյանի բնակած տունը, բայց ի տխրություն ամենքիս, տեղացիները հայտնում են մեզ, որ ուրիշ շատ տների ու շինությունների թվում, գերմանական բարբարոսները ավերել են նաև այդ տունը։

Երբ աննկատելի կերպով իջնում է երեկոն, մենք հրաժեշտ ենք տալիս Աբովյանի ուսանողական տարիների գեղեցիկ օրորան Դորպատին և ուղևորվում եղբայրական Լատվիայի մայրաքաղաք Ռիգա։ Այստեղ կայարանում մեզ դիմավորում է քաղաքի կոմսոմոլը։ Կոմերիտականները ջերմ սիրով ողջունում են մեզ, սրտաբաց ընդունում և հոգում մեր բոլոր կարիքները։ Մենք Ռիգայում մնացինք 5 օր։ Եղանք քաղաքի եղբայրական գերեզմանոցում, ազգային թանգարանում, քաղաքամերձ մասերում և այլն։

Ռիգայից հետո մենք մեկնում ենք Մոսկվա՝ մարդկության ազատության, երջանկության ու բախտավորության օրորանը, Սովետական Մեծ Միության տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի կենտրոն, որտեղ ապրում և աշխատում է մեր մեծ ու իմաստուն առաջնորդը՝ ընկեր Ստալինը։ Մոսկվայում մենք մնացինք 8 օր։ Այցելեցինք անմահ Լենինի դամբարանը, նրա անվան թանգարանը, դրադարանը, ռևոլուցիոն թանգարանը, Տրետյակովսկա գալերեան, Գորկու և Սոկոլնիկովի սքանչելի պարկերը, Լազարյան ճեմարանը և այլ բազմա-

թիվ տեղեր։ Մոսկվայում ստացած մեր տպավորությունները անմոռաց են ու անջնջելի։

Օգոստոսի 14-ին հրաժեշտ տալով մեր սիրելի հարազատ մայրաքաղաքին՝ Մոսկվային, ճանապարհ ընկանք դեպի Երևան։ Մենք վերադարձանք միանգամայն խարմացած, հանդիսատացած և աշխատանքի մեծ եռանդով տոգորված։ Մենք մեզ հետ բերեցինք քաղցր հուշեր և անջնջելի տպավորություններ։ Մեր սրտերը լցված են սիրո, հարգանքի ու երախտագիտության բուռն զգացումով դեպի մեր հզոր Հայրենիքը և մեր մեծ ու իմաստուն առաջնորդը՝ ընկեր Ստալինը»։

№ 28 Իգական միջնակարգ դպրոցի աշակերտուհիները լեզվի և գրականության դասատու Գ. Ալեքսանյանի ղեկավարությամբ կատարել են նաև մի այլ հետաքրքրական աշխատանք։ Նրանք հանգամանորեն ուսումնասիրել են մեր մայրաքաղաքում ապրող երիտասարդ բանաստեղծներից մեկի՝ Հ. Շիրազի կյանքը և այն արտահայտել են խելացիորեն կազմած մի իլուստրացիոն տախտակով, որը դիտողի վրա թողնում է խորը և անջնջելի տպավորություն։ Բանաստեղծ Շիրազի կյանքը պատկերող այդ տախտակը վերնագրված է այսպես «Կենսագրական իլուստրացիոն մոնտաժ նվիված շնորհալի բանաստեղծ Հ. Շիրազին»։ Տախտակի կենտրոնում տավիղի մեջ նկարված է բանաստեղծի պատկերը, իսկ աջ և ձախ կողմում վերից վար, զետեղված են Հ. Շիրազի կյանքը պատկերող զանազան արտահայտիչ նկարներ։ Առաջին նկարը պատկերում է ցարական դժնդակ ժամանակաշրջանի մի աղքատիկ խրճիթ, որտեղ սգավոր կինը յուր մանկանը գրկած, հուսահատ ու վշտաբեկ մորմոքվում է իր ամուսնու դագաղի առաջ։ Այս նկարի տակ գրված է «Շիրազը մոր գրկում՝ հոր դագաղի առաջ»։ Հաջորդ նկարը պատկերում է ամերիկյան որբանոցը, որտեղ դաժան վերակացուն անպաշտպան ու սարսափահար մանուկների առաջ անգթորեն դանակոծում է որբանոցի սան փոքրիկ Հովհաննեսին։ Մի այլ նկար պատկերում է շուկայի եռուզեռը, որտեղ ցնցոտիավոր մի պատանի՝ փոքրիկ Շիրազը, սափորով ջուր է ծախում։ Նկարներից մեկն էլ պատկերում է կյանքի բեռի տակ կքած մի փինաչի՝ կոշիկ կարելիս։ Նկարը ստորագրված է «Փինաչի Հովո»։ Այնուհետև Շիրազը պատկերված է տեքստիլ գործարանում որպես բանվոր։ Շնորհիվ սովետական աղատ

օրերի, տառապած մարդկանց կյանքի մեջ ստեղծված հոյակապ ու արագընթաց վերխոյանքի՝ բանվոր Շիրազը ևս վեր է բարձրանում, առաջ գնում և ուսում, կրթություն ստանում։ Եվ ահա հաջորդ նկարում մենք բանվոր Շիրազին տեսնում ենք Պետական համալսարանի դասախոսություններ ունկնդրելիս և վերջապես եզրափակող նկարը Շիրազին պատկերում է որպես սովետական վառվռուն բանաստեղծ՝ մեր մայրաքաղաքի Լենինի հրապարակում մի խումբ բանաստեղծների հետ զրոսնելիս։

№ 28 իգական միջնակարգ դպրոցում հայրենի երկրի ուսումնասիրման ու ճանաչման վերաբերյալ հավաքվել ու կուտակվել են շատ հետաքրքրական, արժեքավոր բազմաթիվ ու բազմատեսակ նյութեր։ Սակայն բանն այն է, որ այս դպրոցը չունի մի տեղ, մի անկյուն, որպեսզի հնարավոր լինի դպրոցական հայրենագիտական թանգարան հիմնել և այդ բոլոր նյութերը կենտրոնացնել։

Բայազեդի շրջանի Սարուխան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտները, ուսումնասիրելով իրենց հայրենի գյուղի կատարած աշխատանքը Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին, կազմել են մի շատ հետաքրքրական գործ՝ «Մեր գյուղը Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին» խորագրով։

Ալավերդու միջնակարգ դպրոցի աշակերտները բավականին լուրջ կերպով զբաղվել են իրենց հայրենի երկրի բնության, արդյունաբերության, հանքավայրերի, հանքատեսակների և այլն ուսումնասիրությամբ և կազմել հարուստ կոլեկցիաներ։ Բացի այդ, նրանք լաբորատոր եղանակով ուսումնասիրել են նաև քիմիական զանազան նյութեր։

Հայրենի երկրի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Բերիայի և Ստեփանավանի շրջանների դպրոցականները։ Նրանք գրի են առել ֆոլկլորային զանազան նյութեր՝ ժողովրդական հեքիաթներ, պատմվածքներ, երգեր և այլն։ Կազմել են արժեքավոր հերբարիումներ, կոլեկցիաներ, տեղագրական քարտեզներ և այլն։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման ուղղությամբ հետաքրքրական ու արժեքավոր աշխատանք են կատարել Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտները։ Այդ աշխատանքի մասին դպրոցի դիրեկտոր ընկ. Ա. Ստեփանյանը գրում է.

«Հայրենի երկրի ուսումնասիրության ուղղությամբ մեր դպրոցականները կազմակերպել են մի շարք էքսկուրսիաներ ու արշավներ։ Դպրոցի 8—10 դասարանների աշակերտները, որոնք անցնում են հայ ժողովրդի պատմությունը, էքսկուրսիաներ ու արշավներ են կազմակերպել Դվին, Այրիվանք, Գառնի, Սևան, Էջմիածին, Զվարթնոց և այլ պատմական վայրեր։ Այդ էքսկուրսիաների ու արշավների ժամանակ աշակերտները դիտել և ուսումնասիրել են մեր երկրի պատմական հուշարձանները և այն վայրերը, որտեղ տեղի են ունեցել պատմական կարևորագույն իրադարձություններ և դեպքեր։ Նրանք Արտաշատի, Վեդու, Զանգիբասարի և Կոտայքի շրջաններում եղած ժամանակ հատուկ ուշադրություն են դարձրել և ուսումնասիրել մանավանդ այն վայրերը, որտեղ քաղաքացիական կռիվների տարիներին տեղի են ունեցել ռևոլյուցիոն անցքեր։ Նրանք այցելել են նաև Երևանի Պետական պատմական թանգարանը։

Մեր դպրոցի 5—7 դասարանների աշակերտները ևս մի շարք արշավներ ու էքսկուրսիաներ են կազմակերպել Բալաքաուան, Իլանդաղ, Գեղամա լեռները և այլն և դիտել ու ուսումնասիրել են այդ վայրերի լեռնակազմությունը, բուսական ու կենդանական աշխարհը։ Այդ արշավների, էքսկուրսիաների ժամանակ նրանք տեսել են իրենց անծանոթ մի շարք կենդանիներ, թռչուններ, բույսեր և այլն։ Նրանք առանձին հետաքրքրությամբ ուսումնասիրել են մանավանդ տեղական բույսերը և նրանցից նմուշներ հավաքել հերբարիումների համար։ Կանաչազուրկ լեռները և ղռերը ուսումնասիրելիս աշակերտները շատ հետաքրքրորեն առաջ են քաշել այդ վայրերի կանաչազարդման հարցը և խիզախ առաջարկություններ արել նրանցում այգեգործություն զարգացնելու մասին։ Լեռնակազմության ու երկրի մակերևույթի ձևերի ուսումնասիրման ժամանակ 7-րդ դասարանի աշակերտները Ղարաթափա լեռան լանջում հայտաբերեցին սև տուֆաքարի հետքեր։ Այս տուֆաքարի դդալի պաշարների դեպքում Արտաշատի նման շինաքարից զուրկ մի շրջան կունենա շինարարության համար շատ արժեքավոր քարի մի հանքավայր։ Բացի այդ, նրանք Իլանդաղի ստորոտում հայտաբերել են նաև կարմիր օխրայով ներկված մի լեռնատեսակ, որը շատ ազատ կերպով կարելի է օգտագոր-

ծել որպես գոմաղոր կավիճ և ներկանյութ զանազան պետքերի համար։

Մեր դպրոցականները այցելել են նաև Երևանի Բուսաբանական և Կենդանաբանական այգիները։ Նրանք Բուսաբանական այգուց բերել են մի տասնյակից ավելի բուսական տեսակներ։ Աշակերտները այժմ մեր դպրոցի փորձնական հողամասում բուծում են այդ բուսական տեսակները, որպեսզի կարողանան դրանք ուսումնասիրել, բազմացնել ու տարածել շրջանում։ Բացի այդ, նրանք արշավների ու էքսկուրսիաների ժամանակ հավաքած լեռնային տեսակներից, բույսերից և զանազան այլ հավաքած նյութերից կազմել են հերբարիումներ, կոլեկցիաներ, ալբոմներ և այլն»։

Ինչպես տեսնում ենք Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների կատարած հայրենագիտական հետազոտական աշխատանքը մեծ նշանակություն ունի ոչ միայն հենց իրենց դպրոցականների գիտելիքների ընդլայնման, հարստացման ու նրանցում գործնական ունակությունների զարգացման, այլև հայրենի երկրի բնական ռեսուրսների հայտաբերման, մշակման ու օգտագործման համար։

Հայրենի երկրի ուսումնասիրության ուղղությամբ դպրոցի աշխատանք է կատարված նաև 26 Կոմիսարների անվան արական միջնակարգ դպրոցում։ Այդ աշխատանքի մասին դպրոցի ուսմասվար ընկ. Բ. Աղիզյանը գրում է հետևյալը.

«Վերջին երկու-երեք տարիների ընթացքում ուսուցիչները, կոմերիտական ու պիոներական կազմակերպությունները հայրենի երկրի ուսումնասիրման ու ճանաչման գծով ծրագրել ու կատարել են մի շարք աշխատանքներ։ Այսպես օրինակ՝ 7—10 դասարանների աշակերտները կատարել են հետիոտն արշավներ Արզնի, Քանաքեռգէս, Այլումինշին և այլն։ 5—7 դասարանների աշակերտների համար էքսկուրսիաներ են կազմակերպվել Քանաքեռ՝ Աբովյանի տուն-թանգարան, Էջմիածին՝ Զվարթնոց, Կարմիր բլուր, Գառնի-Գեղարդ, Թբիլիսի-Գորի, Պետական պատկերասրահ, պատմության թանգարան և այլն, իսկ 1—7 դասարանների աշակերտների համար՝ Երևանի Պետական գավառագիտական թանգարան, Կենդանաբանական

այգի, Մանկական երկաթգիծ ու թռնել, Զանգու, Երգէս և այլն, և այլն։

Այս էքսկուրսիաներն ու արշավները ունեցել են որոշակի նպատակ, նախապատրաստվել և անց են կացվել կանխամտածված ու ծրագրված կերպով։ Դրանք ղեկավարել են ուսուցիչները, դասղեկները և կոմերիտական ու պիոներական ղեկավար աշխատողները։

Յուրաքանչյուր էքսկուրսիայից կամ արշավից հետո ամփոփվել են կատարված հետազոտումների արդյունքները և ըստանց շուրջը կազմակերպվել են կոլեկտիվ զրույցներ, հարց ու պատասխաններ, բանավոր զեկուցումներ և գրավոր աշխատանքներ (շարադրություններ և այլն)։

Աշակերտների համար կազմակերպված այդ էքսկուրսիաներն ու արշավները շատ մեծ դեր կատարեցին նրանց գիտելիքների հարստացման ու ամրացման գործում։ Այսպես օրինակ՝ Քանաքեռ՝ Աբովյանի տուն-թանգարան և Արեղյանի անվան գրականության ինստիտուտ կատարված էքսկուրսիաները դպրոցականների մեջ մեծ հետաքրքրություն առաջացրին դեպի Խաչատուր Աբովյանը և նրանց համար ավելի ճանաչելի դարձրին մեր այդ մեծ հայրենասերի ու լուսավորչի կյանքը և հասարակական ու գրական-մանկավարժական գործունեությունը։

Դեպի Կենդանաբանական այգի կատարված էքսկուրսիայի ժամանակ, որը ղեկավարում էր բնագիտության դասատու Ք. Բաղդասարյանը, 7-րդ դասարանի աշակերտները տեսնելով և ուսումնասիրելով մի շարք կենդանիներ ու թռչուններ՝ ավելի կոնկրետ պատկերացում ունեցան դասարանում անցածի մասին։ Էքսկուրսիայից հետո դասատու Ք. Բաղդասարյանը աշակերտներին իրենց տպավորությունների մասին շարադրություններ է գրել տալիս։

Աշխարհագրությունից որոշ թեմաներ անցնելուց հետո ուսուցչուհի Ա. Մկրտչյանը 7-րդ դասարանի աշակերտների համար էքսկուրսիա կազմակերպեց դեպի Ի Երգէս, Զանգու գետը, որտեղ նրանք դիտեցին և հետազոտեցին գետի ափերը, հոսանքը, սահանքները, հունը և կոնկրետ դաղափար կազմեցին նրա էներգետիկ նշանակության մասին։ Այս էքսկուրսիայի ժամանակ աշակերտները կարողացան կոնկրետ կերպով տես-

նել և ուսումնասիրել նաև երկրի կեղևը, կեղևի ձևերը, նրա հարթություններն ու բարձրությունները և այլն։ Այս էքսկուրսիան բազմապատկեց ու կոնկրետացրեց աշխարհագրության դասերին աշակերտների ստացած գիտելիքները։ 4-րդ Բ դասարանի հայոց լեզվի ուսուցչուհի Ս. Շիրակունին յուր աշակերտներին Գավառագիտական թանգարան էքսկուրսիա տանելուց հետո կազմակերպեց բաց դաս, որին ներկա էին նաև մեր մայրաքաղաքի որոշ մանկավարժներ։ Ուսուցչուհի Ս. Շիրակունու այդ բաց դասն անցավ շատ հետաքրքրական։ Նա հարց ու պատասխանի միջոցով աշակերտներին վերարտադրել տվեց այն, ինչ նրանք տեսել էին Գավառագիտական թանգարանում։ Նրա հարցերը շատ դիպուկ էին ու հետաքրքրաշարժ, իսկ աշակերտների պատասխանները՝ հստակ, պարզ ու համոզիչ։ Այն հարցին, թե թանգարանում տեսած պատկերներից ու տեսարաններից ո՞ւմն ինչ է դուր եկել։ Աշակերտների պատասխաններից պարզվել է, որ նրանց դուր է եկել այն պատկերը, երբ պարսկական զորքը 1827 թվականին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ զենքը վայր է դնում և ստիպված Երևանը հանձնում ռուսական զորքին։ Նրանց անչափ դուր էր եկել նաև մեր ռեսպուբլիկայի հարաճուն ու ծաղկուն մայրաքաղաք Երևանը յուր գործարաններով, ֆաբրիկաներով, նորակառույցներով, գիտահետազոտական, ուսումնական հաստատություններով, կուլտուր-լուսավորական հիմնարկներով և այլն։ Ուսուցչուհի Ս. Շիրակունու կազմակերպած այդ էքսկուրսիան և նրան հաջորդող բաց դասը ուսումնա-դաստիարակչական տեսակետից շատ նպատակասլաց էին, վերին աստիճանի արժեքավոր ու հետաքրքրական։

Մեր ռեսպուբլիկայի մի շարք դպրոցներում հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման նպատակով կազմակերպված շրջագայումներին, արշավներին ու էքսկուրսիաներին մեծ տեղ է տրվում։ Անկասկած, այդ շատ դրական երևույթ է դպրոցական կյանքում, որովհետև այդ շրջագայումները, արշավներն ու էքսկուրսիաները հնարավորություն են տալիս հայրենի երկրի բնությունը, բնակչության կենցաղն ու ապրելակերպը, տնտեսական ու կուլտուրական կյանքը, նյութական կուլտուրայի հուշարձանները, պատմական վայրերը և այլն դիտել, տեսնել, հետազոտել ու ճանաչել

անմիջականորեն և ակնառու կերպով։ Դրանք երեխաների առաջ բացահայտում են բնության երևույթների գաղտնիքը, նրանց ներքին կապը և ճանաչելի դարձնում տնտեսական-հասարակական կյանքի պատկերը։ Այս կերպ էքսկուրսիաները, շրջագայումներն ու արշավները նպաստում են դպրոցականների թե՛ գիտելիքների կոնկրետացմանն ու հարստացմանը և թե՛ նրանցում կոմունիստական, մատերիալիստական աշխարհայացքի ձևավորմանը։

Ա. Նեստերովը «Народное образование» ամսագրում (1948 թ. № 6) տեղավորած յուր հոդվածում դպրոցականների կոմունիստական դաստիարակության և ուսուցման գործում էքսկուրսիաների, արշավների ու շրջագայումների կատարած դերի ու նշանակության մասին գրում է հետևյալը. «Պիոներների և դպրոցականների էքսկուրսիաներն ու տուրիստական արշավները օժանդակում են երեխաների կողմից շրջապատող իրադրությունը ճանաչման գործին, նպաստում են նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը, տեսությունը կապում են պրակտիկայի, կյանքի հետ։ Նրանք հանդիսանում են գիտության հիմունքների ուսումնասիրմանը օժանդակող միջոց, սովետական հայրենասիրության դաստիարակության միջոցներից մեկը։ Ճանապարհորդությունները զարգացնում են կամքը, դաստիարակում են կոլեկտիվիզմ և հասարակական այլ ունակություններ, կոփում են օրգանիզմը, ամրապնդում են առողջությունը, երեխաներին տալիս են լավ հանգիստ։ Ճանապարհորդությունների ընթացքում ձեռք են բերվում աշխատանքի ու պաշտպանության համար անհրաժեշտ գործնական արժեքավոր ունակություններ»։

Սակայն այդ արշավները, շրջագայումները և էքսկուրսիաները, որպեսզի ծառայեն իրենց նպատակին, պետք է կազմակերպվեն խնայցի ու նախամտածված կերպով։ Ընդորում հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել ոչ միայն դրանց նախապատրաստման ու անցկացման, այլ նաև ձեռք բերված ու հավաքված նյութերի մշակման, կարգավորման և դրանցից կոլեկցիաների, հերբարիումների, էքսպոնատների, ալբոմների և այլ պատրաստման վրա։ Այս դեռ քիչ է։ Հարկավոր է շրջագայումների, արշավների և էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերված նյութերը մշակել ու սիստեմավորել, որպեսզի դրանք ծառայեն ոչ միայն ուսումնա-դաստիարակչական նպատակների համար և օգտագործվեն դասավանդման

պրոցեսում, այլև օգտակար լինեն հայրենի երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։ Միայն այս կերպ կազմակերպված հայրենագիտական աշխատանքը կարող է նպաստել մի կողմից դպրոցականների ուսուցման ու դաստիարակման գործի բարելավմանը, իսկ մյուս կողմից հայրենի երկրի տնտեսության, կուլտուրայի զարգացմանն ու բնակչության նյութական դրության էլ ավելի բարելավմանը։

Ինչպես տեսնում ենք, մեր ռեսպուբլիկայի վերոհիշյալ դպրոցներն այս կամ այն չափով զբաղվել են հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործով, հետևապես նրանցում ուսումնա-դաստիարակչական մյուս աշխատանքների հետ միասին տեղ է բռնել նաև հայրենագիտական աշխատանքը։ Սակայն բանն այն է, որ այդպիսի դպրոցները մեր ռեսպուբլիկայում ցավոք սրտի փոքրաթիվ են։ Ընդհակառակն մեր ռեսպուբլիկայի դպրոցների խոշորագույն մասում անտեսված, մոռացության է տրված հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործը, հայրենագիտական աշխատանքը։ Մի՞թե այս կարգի դպրոցներում երբևիցե ուսումնասիրել են իրենց հայրենի երկրի բնությունը՝ աշխարհագրական դիրքը, հողը, ջուրը, լեռնակազմությունը, օգտակար հանածոները, կլիման, եղանակը, կենդանական ու բուսական աշխարհը և այլն. բնակչությունը՝ նրա կազմը, աճումը, բնակարանը, կենցաղը, վարքերն ու բարքերը և այլն։ Տնտեսական կյանքը՝ ֆաբրիկաները, գործարանները, արդյունագործական ձեռնարկությունները, սովխոզները, կոլխոզները, մեքենա-տրակտորային կայանները, տրանսպորտը, առևտուրը և այլն, և այլն։ Իհարկե՝ ոչ։ Կամ մի՞թե նրանք ուսումնասիրել են իրենց շրջանի, գյուղի, քաղաքի պատմական անցյալն ու արդիական կյանքը և ստեղծել հայրենի երկրի պատմությունը։ Դարձյալ՝ ոչ։

Մեր ռեսպուբլիկայի և ոչ մի դպրոցում և նույնիսկ մեր մայրաքաղաքի դպրոցներում դեռ չի ստեղծվել հայրենի երկրի պատմությունը։ Ի դեպ հայրենի երկրի պատմական անցյալի և արդիական կյանքի ուսումնասիրման և նրա պատմության ստեղծման մասին խոսելիս, ոմանք այն անհեթեթ ու տարօրինակ կարծիքն են հայտնում, թե այդպիսի աշխատանք կատարելը ավելորդ է ու աննպատակ, որովհետև ինչ մեզ հայտնի է հայրենի երկրի պատմական անցյալի մասին, ուսումնասիրվում է հայ ժողովրդի պատ-

մության դասավանդման ժամանակ, իսկ նրա արդիական կյանքի վերաբերյալ նյութերն էլ հետազոտվում են կոնստիտուցիայի դասերին։ Հետևաբար, եզրակացնում են նրանք, դպրոցում այդ ուղղությամբ հայրենագիտական աշխատանք կատարելու համար բան չի մնում։

Կասկածից դուրս է, որ այդ կարգի մարդիկ նախ չեն պատկերացնում հայրենագիտական աշխատանքի բովանդակությունն ու նշանակությունը դպրոցում և ապա չեն իմանում իրենց հայրենի երկրի, այսինքն այն վայրի, որտեղ նրանք ապրում են ու աշխատում, ոչ միայն պատմական անցյալը, այլև արդիական կյանքը։ Մինչդեռ մեր ռեսպուբլիկայի ամեն մի քաղաք, ամեն մի շրջան և նույնիսկ առանձին գյուղեր ունեն իրենց պատմական անցյալը, իրենց արդիական կյանքը, որը շատ հարուստ ու առատ նյութ է տալիս հայրենագիտական աշխատանքի համար։ Այդ բանում կարելի է համոզվել, եթե մենք ծանոթանանք մեր ռեսպուբլիկայի քաղաքների ու շրջանների թեկուզ մի քանիսի պատմական անցյալի ու արդիական կյանքի վերաբերյալ նյութերի հետ։ Օրինակ՝ ի՞նչ է պակասում, որպեսզի մեր մայրաքաղաքի դպրոցներում զբաղվեն Երևանի պատմական անցյալի և արդիական կյանքի ուսումնասիրման գործով և ստեղծեն նրա պատմությունը։ Անշուշտ և ոչ մի բան։ Երևանն ունի խորը պատմական անցյալ և շատ հարուստ ու բազմաբովանդակ արդիական կյանք։ Քիչ չեն նրա պատմական անցյալի մասին եղած տեղեկությունները, անսպառ են նրա արդիական կյանքի վերաբերյալ նյութերը։

Եվ փրոք։ Ինչպես ցույց են տալիս՝ պատմա-հնագիտական ուսումնասիրությունները Երևանը բնակելի վայր է եղել շատ առաջ, նույնիսկ մինչև ուրարտուական պետության (885—585 մ. թ. ա.) կազմավորումը։ Ուրարտուական թագավորները դեպի հյուսիսային Հայաստան կատարած իրենց արշավանքների ժամանակ գրավում են նաև այժմյան Երևանի բռնած տերիտորիան յուր շրջակայքով։ Նրանք իրենց կատարած այդ նվաճումների մասին թողած սեպագիր արձանագրությունների մեջ հիշատակում են «Երիայնի» երկրանունը կամ ցեղանունը, որից և, ըստ պրոֆեսոր Նիկոլսկու, ծագել է Երևան տեղանունը։ Երևանի շրջակայքում ուրարտական թագավորների կառուցած ամրություններից ամենանշանավորը Կարմիր

քլուրն է։ Այստեղ կատարված պեղումների ժամանակ հայտաբերվել են ուրարտուական թագավորներ Արգիշտի I-ի (778—755 մ. թ. ա.) փորագրված բրոնզյա վահանը և Ռուսա II-ի (680—645 մ. թ. ա.) սեպագիր արձանագրությունը, կործանված ու հողի տակ ծածկված բերդ-ամրոցի պարիսպներ, բնակելի շենքերի ավերակներ, տնային զանազան իրեր ու առարկաներ և այլն։ Հնագիտական պեղումների ժամանակ հայտաբերված հնության այս մնացորդները, ինչպես նաև պատմագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ Կարմիր բլուրը եղել է ուրարտուական շատ կարևոր բերդ-ամրոց։

Մեր պատմության մեջ Երևանը առաջին անգամ հիշվում է 7-րդ դարի սկզբներին, Դվինում 607 թվականին տեղի ունեցած եկեղեցական ժողովի ժամանակվանից, որտեղ կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու եկած հոգևորականների ցուցակում նշվում է նաև ոմն Դավիթ Երևանցու անունը։ Այդ հիմք է տալիս ենթադրելու, որ Երևանն այդ ժամանակ, ըստ երևույթին, եղել է մի այնպիսի նշանավոր ավան, որ նրա ներկայացուցիչն իրավունք է ունեցել մասնակցելու եկեղեցական մի այդպիսի նշանավոր ժողովի։ Այնուհետև Երևանը պատմության մեջ հիշատակվում է նաև 8-րդ դարում։

14-րդ դարի 2-րդ կեսում, Լենկթեմուրի 1386 թվականի արշավանքների ժամանակ, Երևանը ենթարկվում է նրա հրոսակախմբերի կատարած բարբարոսական ավերումներին ու կոտորածներին։ 15-րդ դարի պատմագիր Թովմաս Մեծոփեցին նկարագրել է Լենկթեմուրի հրոսակախմբերի կատարած այդ ավերումներն ու կոտորածները։ Թովմաս Մեծոփեցին անձամբ եղել է Երևանում։ Նա այն ժամանակվա Երևանը համարում է գյուղաքաղաք։

15-րդ դարի երկրորդ կիսում Աղ-կոյունլուները, հաղթանակ տանելով Կարա-կոյունլուների (երկուսն էլ թուրքմենական ցեղեր են եղել) նկատմամբ, հաստատվում են Երևանում և այն դարձնում իրենց նստավայրը։

15-րդ դարի վերջում Աղ-կոյունլուներին պարտության են մատնում պարսիկները, և Երևանը, Հայաստանի մի շարք այլ գավառների հետ միասին, անցնում է Պարսկաստանի տիրապետության տակ։ 16-րդ դարի սկզբից Երևանը դառնում է պարսկական կուսակալ Ռևան խանի նստավայրը, որը այստեղ կառուցելով մի

շարք բերդապարիսպներ ու ամրություններ, Երևանը վեր է ածում ռազմական բերդաքաղաքի։

Իհարկե, սրանից չպետք է հետևեցնել, որ Երևանը այն ժամանակ և դրանից հետո ուներ միայն ռազմական նշանակություն։ Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Երևանը դրա հետ միասին եղել է նաև տնտեսական ու քաղաքական կյանքի կարևոր կենտրոն։

Այնուհետև, մոտ երկու դար (16—17) տևող պարսկա-օսմանյան պատերազմների ընթացքում Երևանը անցնում է ձեռքից ձեռք, նա երբեմն ընկնում է պարսիկների, երբեմն էլ Թուրքերի ձեռքը։ Այս դրությանը վերջ է տրվում այն ժամանակ, երբ պարսկական շահ Սեֆ II-ը (1629—1642) Թուրքերից վերցնում է Երևանը և հանձնում Քելբալի խանի իշխանությանը։ Ահա այդ ժամանակվանից սկսած մինչև 1827 թվականը, մոտ երկու հարյուր տարի, Երևանը դառնում է պարսկական խաների նստավայրը, որոնք ամրանալով այստեղ՝ դաժանորեն հարստահարում էին ժողովրդին։

1827—28 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, ռուսական զորքերը պարսիկներից դրավում են Երևանը, որի պարսկական վերջին տիրակալն է լինում Հյուսեին խանը։

Ցարական տիրապետության ժամանակաշրջանում Երևանը դառնում է նահանգական կենտրոն, իսկ հայ բուրժուազիայի դաշնակցական-մաուզերիստական տիրապետության ժամանակ՝ դաշնակ-մաուզերիստների նստավայր։

1920 թվականին Հայաստանում Սովետական իշխանության հաստատմամբ Երևանը ազատվում է դարավոր ճնշումից ու հարստահարումից և դառնում Սովետական Հայաստանի մայրաքաղաք։ Սովետական իշխանության ժամանակ Երևանը ենթարկվում է սոցիալիստական վերակառուցման և դառնում Սովետական Միության ծաղկած ու բարգավաճած քաղաքներից մեկը։ Հսկայական են այն նվաճումները, որոնք Սովետական իշխանության տարիներին Երևանը ձեռք է բերել տնտեսության ու կուլտուրայի զարգացման և աշխատավորության նյութական կյանքի բարելավման գործում։

Հին Երևանից պահպանվել և մեզ են հասել բազմաթիվ պատմական հուշարձաններ, որոնցից հայտնի են՝ Երևանի բերդը (կա-

ռուցված 16-րդ դարում), մի շարք եկեղեցիներ՝ Պողոս Պետրոս, որը կառուցված է եղել 17-րդ դարում, Կաթուղիկե եկեղեցին, որը հիմնված է 12—13-րդ դարերում և ընդարձակված 17-րդ դարում, ս. Հովհաննես, ս. Ջորավոր և ս. Սարգիս եկեղեցիները, կառուցված 17—18-րդ դարերում։ Պահպանվել են մի շարք մզկիթներ, որոնք կառուցված են 17—19-րդ դարերում։ Որպես հնություն հիշատակության արժանի է նաև Ջանգու գետի կամուրջը, որը կառուցված է 1679 թվականին և Նորքի ձորի կամուրջը՝ կառուցված 1664 թվականին։ Երևանը դեռևս շատ հնում զարգացած է եղել այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ։ Այդ պատճառով էլ նրա շրջակայքում անց են կացվել մի շարք ջրանցքներ, որոնց մեր ժողովուրդը անվանել է առու։ Այդ ջրանցքներից հայտնի են Նորքի կամ Մեծ առուն, Դալմի առուն, Մամոր առուն, Աբուհայզմի առուն և այլն։

Երևանում են գտնվում մեր երկրի պարտիական, կառավարական ղեկավար օրգանները, վարչա-տնտեսական հիմնարկները, նշանավոր արդյունաբերական ու արդյունագործական ձեռնարկությունները, ֆաբրիկաները, գործարանները, արտելները, առևտրական հիմնարկները, նորակառույցները, գիտա-հետազոտական հաստատությունները, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, Պետական համալսարանը, Ասպետագիտարանը, ինստիտուտները, առաջավոր դպրոցները, տեխնիկումների, ուսումնարանների, կինո-թատրոնների, դրադարանների, թանգարանների մեծ մասը և այլն, և այլն։

Երևանի անցյալի՝ նախասովետական շրջանի մասին, մեր բերած վերոհիշյալ պատմական ժամանակագրական տեղեկությունները և սովետական շրջանի վերաբերյալ եղած առատ ու անսպառ նյութերը ապացույց են այն բանի, որ մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքն ունի բազմադարյան պատմություն և բազմաբովանդակ արդիական, սոցիալիստական կյանք և շատ հետաքրքրական օբեկտ կարող է լինել մեր դպրոցականների հայրենագիտական աշխատանքի համար։

Հայրենագիտական աշխատանքի համար թե՛ նախասովետական շրջանի և թե՛ սովետական շրջանի պատմությունից հարուստ նյութ կարող են տալ նաև մեր ռեսպուբլիկայի մյուս քաղաքները

և շրջանները։ Որպես օրինակ նրանցից կարելի է վերցնել մի քանիսը և ապացուցել, որ մեր ռեսպուբլիկայի քաղաքները, շրջանները և նույնիսկ առանձին գյուղերը հայրենի երկրի ուսումնասիրման և նրա պատմության ստեղծման համար շատ հարուստ ու առատ նյութ ունեն։

Վերցնենք թեկուզ Նոր-Բայազեդի, Սիսիանի, Գորիսի և Զանգեզուրի շրջանները, որոնց բռնած տերիտորիան հնում մտնում էր պատմական Հայաստանի Սյունաց կամ Սյունիք նահանգի մեջ։

Պատմագիտական հետազոտումները և հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ պատմական ամենախոր անցյալում Նոր-Բայազեդի, Սիսիանի, Գորիսի և Զանգեզուրի շրջանների բռնած տերիտորիայում ևս մարդիկ ապրել են նախնադարյան-համայնական հասարակարգով։

11-րդ դարից (մ. թ. ա.) սկսած, երբ նախնադարյան համայնական կարգերը Սյունիքում ապրում էին իրենց վերջին շրջանը, դեպի հյուսիսային Հայաստան սկիզբ են առնում ուրարտուական թագավորների արշավանքները։ Այդ թագավորներից Սարդուր II-ը (755—733 մ. թ. ա.) և Ռուսա 1-ը (733—714 մ. թ. ա.) 8-րդ դարում (մ. թ. ա.) գրավում են նաև Սևանա լճի ավազանը, այսինքն Սյունիքի Գեղարքունյաց կամ Գեղարքունիք գավառը, որի մեջ էր մտնում նաև այժմյան Բայազեդի շրջանի բռնած տերիտորիան։ Նրանց թողած սեպագիր արձանագրությունների մեջ շատ արժեքավոր տեղեկություններ կան Գեղարքունիքի տեղական բնակչության վերաբերյալ։ Այդ արձանագրությունների մեջ հիշվում են Վելիքուխի անունը, որից և ծագել է Գեղարքունիքի անունը, սունա (Sunia) բառը, որը ուրարտուական լեզվով նշանակում է լիճ, մի հասարակ անուն է, որից առաջացել է Սյունիք կամ Սևան տեղանունը։

Ուրարտուական թագավորության անկումից հետո Սյունիքը ևս ընկնում է նախ պարսկական գերիշխանության (550—330 մ. թ. ա.) և ապա մակեդոնական-սելևկյան տիրապետության (330—190 մ. թ. ա.) տակ։ Սակայն երբ Արտաշես I-ը (189—160 մ. թ. ա.) թոթափում է սելևկյան լուծը և հիմնում հայկական ինքնուրույն պետություն, որը պատմության մեջ հայտնի է Արտաշեսյան թագավորություն (189—1 մ. թ. ա.) անունով, այն ժամանակ Սյունիքը նույնպես մտնում էր այդ թագավորության սահմանների մեջ։

Արշակունյաց թագավորության ժամանակ (66—429) Սյունիքը եղել է ֆեոդալական Հայաստանի գլխավոր նախարարություններից մեկը՝ մոտ 21 վասալ իշխաններով և 19.400 զորքով։ Նա ֆեոդալական մեծ նախարարություն է կազմել նաև մարզպանության շրջանում (429—640), բայց Հայաստանի մյուս շրջանների հետ միասին գտնվել է պարսկական տիրապետության տակ։ Սյունյաց նախարարական տոհմի ավագը կոչվում էր նաև նահապետ, իսկ նախարարությունը՝ նահապետություն։ Սկզբում Սյունյաց նահապետության կենտրոնը հանդիսանում էր Ծղուկը՝ (այժմյան Սիսիանի շրջանը) նախ Շաղատ և ապա Սիսիան դահանիստ քաղաքավանում։ Հետագայում նրա կենտրոնը դառնում է Վայոց ձորը Եղեգիս (այժմ Ագայազ, Միկոյանի շրջանում) նստավայրով։ Իսկ երբ հիմնվում է Սյունյաց առանձին թագավորությունը, որը կոչվում է նաև Բաղաց թագավորություն (978—1170), այն ժամանակ Սյունիքի վարչատնտեսական կենտրոնը Եղեգիսից տեղափոխվում է Կապան (Ղափան) քաղաքը։

Մասանյան պետության (226—640) արաբներից կրած պարտությունից հետո, Սյունիքը դուրս գալով պարսկական տիրապետության տակից, ընկնում է արաբական գերիշխանության ներքո (640—885)։ Սյունիքը արաբական լծից ազատվում է այն ժամանակ, երբ Բագրատունյաց թագավորության (885—1045) հաստատմամբ Հայաստանը ձեռք է բերում ինքնուրույնություն։

Պարսկական և արաբական տիրապետության շրջանում և նույնիսկ Բագրատունյաց թագավորության ժամանակ Սյունիքը օտարերկրյա նվաճողների կողմից բազմիցս ենթարկվել է ասպատակումների, ավերումների, կողոպտումների ու կոտորածի։ Սրա հետ միաժամանակ Սյունիքի աշխատավորությունը հարբստահարվել ու կեղեքվել է նաև տեղական շահագործող դասակարգի՝ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալականության կողմից։ Այդ պատճառով էլ Սյունիքը պայքարի է դուրս եկել ոչ միայն օտարերկրյա նվաճողների, այլև տեղական շահագործողների դեմ։

Սյունիքի պատմությունը շատ հարուստ է ներքին ու արտաքին հարստահարողների ու կեղեքիչների դեմ մղած պայքարի փաստերով։ Այսպես օրինակ՝ նա մասնակցում է հայերի պարսկական բռնակալության դեմ կազմակերպված 451 թվականի, 481—484

թվականների և արաբական տիրապետության դեմ բարձրացրած 702—703 թ. թ., 850—852 թվականների և այլ ապստամբություններին։ Սյունիքի գյուղացիությունը ապստամբել է նաև տեղական աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների դեմ։ 10-րդ դարում, երբ Տաթևի վանքի, որը այդ ժամանակ հանդիսանում էր հոգևոր ֆեոդալականության կենտրոնը Սյունիքում, եկեղեցական ֆեոդալները իրենց կալվածքների ընդլայնման ու ցանկապատման նպատակով ցանկանում են շրջակա մի շարք գյուղեր տեղահան անել, ուղղակի քնաջնջել, այն ժամանակ գյուղացիներն ընդվզում, ապստամբվում են նրանց դեմ։ Գյուղացիներն այն աստիճան են զայրանում, որ 910-ական թվականներին հարձակվելով Տաթևի վանքի վրա, վերցնում են նրա սպասները, թափում մյուռոնը և սպանում վանականներից մի քանիսին։ Գյուղացիների այդ պայքարը Տաթև վանքի հոգևոր ֆեոդալների դեմ տևում է շատ երկար։ Նրանք 10-րդ դարի վերջում ևս ապստամբվում են Տաթևի վանականների դեմ և այս անգամ արդեն սպանում են վանքի եպիսկոպոսին։ Գյուղացիների այդ ընդվզումների ժամանակ Տաթևի հոգևոր ֆեոդալներին օգնություն են գալիս Սյունիքի աշխարհիկ ֆեոդալները, որոնք դաժանորեն դատաստան տեսնելով ապստամբ գյուղացիների հետ՝ զենքի ուժով քնաջնջում ու հողին են հավասարեցնում նրանց գյուղերը։

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Սյունիքը ասպատակվում և նվաճվում է սելջուկ-թուրքերի կողմից և նրանց տիրապետության տակ մնում մոտավորապես մինչև 12-րդ դարի վերջը։

Վրաց Թամարա թագուհու (1184—1212) ժամանակ Զաքարե և Իվանե Զաքարյանները, նշանակվելով հայոց ու վրաց զորքերի հրամանատարներ, Հայաստանի մի շարք նահանգների հետ միասին, Սյունիքը ևս ազատում են սելջուկ ամիրաների լծից և այն վերցնում իրենց իշխանության ներքո։ Հետագայում Զաքարյանները Սյունիքի որոշ մասը, ներառյալ նաև այժմյան Սիսիանի և Գորիսի բռնած տերիտորիան, հանձնում են իրենց վասալ իշխաններ Օրբելյաններին, որոնք այստեղ շարունակում են տիրել մինչև 15-րդ դարի կեսը։

1236—1242 թվականների մոնղոլական արշավանքների ժամանակ Սյունիքը ևս նվաճվում է մոնղոլների կողմից և ընկնում

նրանց տիրապետության (մոտ 1236—1342) տակ։ Այդ արշավանքների ընդհանուր ղեկավար Չարմաղանը գրավում է Սևանա լճի ավազանը, իսկ Ասլան Նոյի զորավարը՝ Գորիսի, Սիսիանի և այլ շրջանները։

Սյունիքը ծանր տառապանքներ է կրում նաև Լենկթեմուրի ամայացնող արշավանքների ժամանակ։ Այնուհետև նա ուժեղ հարվածներ է ստանում այն մի շարք պատերազմների ընթացքում, որոնք տեղի էին ունենում՝ ա) 15-րդ դարի առաջին կիսում՝ թեմուրիդների և Կարա-կոյունլիների միջև, բ) 15-րդ դարի երկրորդ կիսում նախ Կարա-կոյունլիների ու Աղ-կոյունլիների և ապա վերջինների ու օսմանցիների միջև, գ) 16—17-րդ դարերում պարսկական և օսմանյան պետությունների միջև։

Այս երկարատև պատերազմներից հետո, պարսկական և օսմանյան պետությունների միջև կնքված 1639 թվականի դաշնագրով Սյունիքը ևս անցնում է Պարսկաստանի տիրապետության տակ և բավական երկար ժամանակ՝ մոտ 2 դար, տանում պարսկական խանների ու սարդարների լուծը։ 16-րդ դարից սկսած Սյունիքում նախկին նախարարական տոհմերի նահապետների ու իշխանների փոխարեն հանդես են գալիս Մելիքները, որոնք հպատակվելով պարսիկ խաներին, Սյունիքում շարունակում են տիրել նաև պարսկական տիրապետության ժամանակ։ Սյունիքը չկարողանալով տանել պարսկական պետության ծանր լուծը, Դավիթ Բեկի (1722—1728) ղեկավարությամբ 1722 թվականին ապստամբության դրոշ է բարձրացնում նրա դեմ։ Սյունիքը ազատագրվում է պարսկական ծանր լծից։ Ապստամբ հայերը ազատագրված Սյունիքի համար մոտ 8 տարի հերոսաբար կռվում են մի կողմից պարսիկների, իսկ մյուս կողմից դեպի Սյունիք արշավող օսմանցիների դեմ։ Դրսից անհրաժեշտ օգնություն չստանալով և ներքին երկպառակտումների հետևանքով՝ ազատագրված Սյունիքը պաշտպանող հայկական բանակը կազմալուծվում է։ Պարսիկները օգտագործելով այս հանգամանքը, դաժան կերպով ճնշում են հայերի ապստամբությունը, նորից գրավում են Սյունիքը և այնտեղ վերահաստատում իրենց տիրապետությունը։

1827—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմից հետո, Թուրքմենչայի 1828 թվականի դաշնագրի համաձայն նոր-

Բայազեդի, Սիսիանի, Գորիսի և Սյունիքի այլ գավառները ևս միակցվում են ցարական Ռուսաստանին։

1917 թվականի փետրվարյան ռևոլուցիայի ժամանակ, երբ տապալվում է ցարական իշխանությունը, Նոր-Բայազեդում, Գորիսում, Սիսիանում և Սյունիքի այլ մասերում ևս հաստատվում է հայ բուրժուազիայի դաշնակցական-մաուզերիստական տիրապետությունը։ Ինչպես ցարական կեղեքողների, այնպես էլ դաշնակցական հարստահարողների ժամանակ Սյունիքը, ենթարկվելով դաժան բռնադատումների ու հարստահարումների՝ կանգնում է բացարձակ կործանման առաջ։ Այս խորտակումից ազատվելու համար Սյունիքը բազմիցս ապստամբության դրոշ է բարձրացնում և ռևոլուցիոն ելույթներ կազմակերպում ինչպես ցարական կառավարության, այնպես էլ դաշնակցական տիրապետության դեմ։ Այսպես օրինակ՝

1. Նոր-Բայազեդի գյուղացիները, չկարողանալով տանել ծանր հարկերն ու տուրքերը, 1833—1838 թվականներին ապստամբվում և ելույթ են կազմակերպում ցարական կեղեքիչների դեմ, որը դաժան կերպով ճնշվում է ցարական վոյսկովոյի կողմից։

2. Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի ժամանակ, 1905—1907 թվականներին, բռնկվում են Սիսիանի ու Գորիսի գյուղացիության ագրարային շարժումները, որոնք տեղական հողատերերի ու հարուստների աջակցությամբ ամենադաժան կերպով ճնշվում են գեներալ Վերվենի կողմից։

3. Ռուսական երկրորդ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի ժամանակ՝ 1917 թվականին, Զանգեզուրում տեղի են ունենում հանքագործ բանվորների գործադուլները, որոնք իրենց արձագանքներն են գտնում նաև Սիսիանում, Գորիսում և այլն, ուր ռուսական ցարիզմի տապալման առթիվ կազմակերպվում են միտինգներ, ցույցեր և այլն։

4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի ժամանակ Գորիսում և Սիսիանում տեղի են ունենում գյուղացիական նոր շարժումներ, որոնք տևում են 1917—1918 թվականները։

5. 1920 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Սիսիանում ու Գորիսում դաշնակցական-մաուզերիստական տիրապետության դեմ

կազմակերպվում են հեղափոխներ, իսկ 1920 թվականի մայիսին՝ մասսայական ապստամբություն։

6. Նոր-Բայազեդի շրջանի աշխատավորությունը ևս աննկուն բոլշևիկ Հ. Սարուխանյանի ղեկավարությամբ 1920 թվականի մայիսին դինված ապստամբություն է բարձրացնում դաշնակցական-մաուզերիստական տիրապետության դեմ։ Դաշնակ-մաուզերիստները վայրագ միջոցներով ճնշում են այդ ապստամբությունը, իսկ նրա ղեկավարին՝ Հ. Սարուխանյանին գաղանաբար մահատանջ են անում ու սպանում։

7. 1920 թվականի հունիսի սկզբին Գորիսում և Սիսիանում տասալվում է դաշնակների տիրապետությունը։ Գորիսը և Սիսիանը հայտարարվում են սովետական։ 1920 թվականի օգոստոսից մինչև նոյեմբերը բոլշևիկյան ջոկատների և դաշնակցական-մաուզերիստական բանդաների միջև տեղի են ունենում քաղաքացիական ուժեղ կռիվներ։ 1920 թվականի հոկտեմբերին դաշնակ-մաուզերիստներին հաջողվում է ետ վերցնել Սիսիանը, իսկ նոյեմբերին՝ Գորիսը։

Սկսվում են Սիսիանի և Գորիսի աշխատավորության անասելի տառապանքները. գազազած դաշնակ-մաուզերիստները ամենադաժան կերպով պատժում են ապստամբ գյուղացիներին և մահատանջ անում ու սպանում կոմունիստներին։ Ահա այդ օրերին է, որ դաշնակ-մաուզերիստները Տաթևի վանքը, որը մի ժամանակ հանդիսանում էր ճորտ գյուղացիներին կեղեքող ու արյունաքամ անող հոգևոր ֆեոդալների կենտրոնը, վեր են ածում բանտի, ուր հավաքում և այնտեղից էլ ժայռից ձորն են նետում բոլշևիկներին։

Սյունիքի աշխատավորությունը արյունառուշտ դաշնակցական-մաուզերիստական տիրապետության ծանր լծից ազատվում է շնորհիվ Սովետական իշխանության, որը նրան դուրս է բերում նոր, սոցիալիստական երջանիկ կյանքի վերելքի ուղի։ Սյունիքի նախկին գավառները՝ Գորիսը, Սիսիանը, Ղափանը, Նոր Բայազեդը և այլն, որ դարեր շարունակ տառապում էին օտարերկրյա զավթիչների և ներքին շահագործողների ծանր լծի տակ, դառնում են Սովետական Հայաստանի ծաղկուն շրջանները և նրա ընդհանուր առաջընթացի հետ միասին արագ կերպով զարգանում ու բարգավաճում։ Այս շրջանները Սովետական իշխանության տարիներին

հանրապետական գործ են կատարել, մեծ նվաճումներ ունեցել և իրենց ուժերը մտցրել սոցիալիզմի կառուցման ու ավարտման համար մղված աշխատանքի ու պայքարի մեջ։

Վերոհիշյալ շրջանների, ինչպես նաև Սովետական Հայաստանի մյուս շրջանների տերիտորիայում մնացել են նյութական կուլտուրայի արժեքավոր բազմաթիվ ու բազմատեսակ հուշարձաններ, ինչպես օրինակ՝ քարայրեր, բերդ-շեներ, ամրոցներ, քաղաքատեղիներ, գյուղատեղիներ, իջևաններ, վանքեր, եկեղեցիներ, դամբարաններ, տնային գործածության զանազան իրեր ու առարկաներ, զարդարանքներ, աշխատագործիքներ, զենքեր և այլն, և այլն։

Ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ շրջանների և Երևան քաղաքի պատմա-ժամանակագրական համառոտ ակնարկը, հայրենի երկրի անցյալի մասին եղած պատմական տեղեկությունները, փաստերն ու նյութերը վերաբերում են մեր ժողովրդի պատմության ամենատարբեր ժամանակաշրջաններին՝ նախնադարյան-համայնական հասարակության ժամանակից սկսած մինչև սովետական շրջանը։ Այդ պատճառով էլ հայրենի երկրի անցյալի և արդիական կյանքի վերաբերյալ այդ պատմական տեղեկությունների, փաստերի ու նյութերի ուսումնասիրումն ու հետազոտումը և նրա պատմության ստեղծումը շատ մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։ Նա մեծ չափով կնպաստի հայ ժողովրդի պատմության դասավանդման գործին դպրոցում։ Նա կնպաստի նաև ՍՍՌՄ-ի պատմության և ընդհանուր պատմության ուսումնասիրման ու դասավանդման գործին, որովհետև նրա ընձեռած պատմական տեղեկությունները, փաստերն ու նյութերը ավելի ակնառու կդարձնեն պատմական իրադարձությունները, դեպքերը, անցքերը և այլն։ Սակայն որպեսզի հայրենի երկրի պատմությունը լինի իսկական, բազմակողմանիորեն հիմնավորված պատմություն, նրա ուսումնասիրությունը պետք է կատարել այն ստեղծության ու կապակցության մեջ, որ նա ունի ամենից առաջ հայ ժողովրդի պատմության և ապա ՍՍՌՄ-ի պատմության և ընդհանուր պատմության հետ։ Առանց այս կապի սահմանման հայրենի երկրի ուսումնասիրությունը կլինի անարժեք մի գործ։

Այնուհետև, հայրենի երկրի պատմական անցյալի և արդիական կյանքի հետազոտումը ու նրա պատմության ստեղծումը մեծ

նշանակություն ունի ոչ միայն պատմության առարկայի ուսումնասիրության և դասավանդման, այլև Հայրենի երկրի բոլանդակ կյանքի՝ բնության, բնակչության, կենցաղի և տպրելակերպի, տնտեսության, կուլտուրայի և այլն ուսումնասիրման համար։ Նա կողմնորոշում և ուղղություն է տալիս Հայրենի երկրի կյանքի բոլոր կողմերի ճանաչման ու հետազոտման համար։ Հենց դրա համար էլ այդքան լուրջ է դրվում Հայրենի երկրի պատմական անցյալի ու արդիական կյանքի ուսումնասիրման և նրա պատմության ստեղծման հարցը։

3. ՄԻ ՔԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՍԱՆԵԼԻ ՓՈՐՁԸ

Ինչպես տեսնում ենք, Հայրենի երկիրը յուր բնությամբ, բնակչությամբ, տնտեսական ու կուլտուրական կյանքով, պատմական անցյալով ու արդիական կյանքով անչափ հարուստ ու առատ նյութ է տալիս Հայրենագիտական աշխատանքի համար դպրոցում։

Սակայն ինչպես կազմակերպել Հայրենագիտական աշխատանքը և այն դպրոցում դարձնել աշակերտների ուսուցման ու դաստիարակման կարևորագույն գործոն, իսկ դպրոցից դուրս ի սպաս դնել Հայրենի երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման գործին, ահա այս է խնդիրը։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման զբաղմունքը ուսումնական ծրագրով նախատեսված գիտելիքների անցման ու դասավանդման հետ, մանկավարժներից պահանջում է համառ ու հետևողական աշխատանք, շատ մեծ վարպետություն ու հմտություն։ Այս ուղղությամբ շատ արժեքավոր գործ են կատարել Մոսկվայի, Լենինգրադի և առաջավոր այլ քաղաքների մանկավարժները։ Այստեղ արժե հիշատակել Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործի կազմակերպման ուղղությամբ նաև Մուրմանսկի մանկավարժների կատարած աշխատանքը։ Նրանք այդ աշխատանքն ընդգրկել են դրեթե բոլոր կողմերով և հասել են շատ դրական արդյունքի։ Նրանք այժմ արդեն այդ բնագավառում ունեն այնպիսի հարուստ ու ուսանելի փորձ, որ նրանից պետք է անպայման օգտվեն նաև մեր ռեսպուբլիկայի մանկա-

վարժները։ Այդ պատճառով շատ կարևոր է այստեղ ներկայացնել Մուրմանսկի մանկավարժների կատարած աշխատանքի այդ ուսանելի և արժեքավոր փորձը*)։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործում Մուրմանսկի մանկավարժները աչքի են ընկնում նախ և առաջ նրանով, որ նրանք հայրենագիտական աշխատանքը կազմակերպում են դպրոցում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների գծով և ապա նրանով, որ նրանք այդ աշխատանքը հունի մեջ են դնում դեռևս տարրական դասարաններում և այն, աստիճանաբար ընդլայնելով ու ծավալելով, յուր վերջնավարտին են հասցնում բարձր և ավարտական դասարաններում։ Այս կերպ նրանց մոտ հայրենի երկրի ուսումնասիրումներն ու հետազոտումներն առանձին առարկաների և տարբեր դասարանների գծով հանդես են գալիս իրենց ամբողջականությամբ, որում հայրենագիտական աշխատանքի առանձին բաղադրամասերը ոչ թե կամայականորեն անջատված են միմյանցից, այլ կազմում են միմյանց աստիճանական, հաջորդական շարունակությունը և լրացնում ու ամբողջականացնում են միմյանց։

Նախ ծանոթանանք Մուրմանսկի մանկավարժների կազմակերպած հայրենագիտական աշխատանքի փորձի հետ տարրական դասարաններում և ապա բարձր ու ավարտական դասարաններում։

Մուրմանսկ քաղաքի № 2 իգական միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանի աշակերտների համար, որպեսզի մի կողմից պարզ, ակնառու և ըմբռնելի դառնա երկրի մակերևույթի ձևերը, իսկ մյուս կողմից էլ, որպեսզի նրանք կարողանան ծանոթանալ հենց իրենց հայրենի երկրի մակերևույթի այդ նույն ձևերի հետ, դասատուները էքսկուրսիա են կազմակերպում մոտակա մի այնպիսի բարձունք, որտեղից երեխաները կարողանում են դիտել հորիզոնը, նրանք

---

*) Մանրամասնությունները տես ա) Методический сборник материалов 3-й педагогической конференции учителей Мурманской области по вопросам краеведения և О. С. Негинский „Краеведческая работа школах Заполярья" հոդվածը „Народное образование" ամսագրի 1948 թ. № 1։

Այստեղ այդ նյութերից գրված են միայն որոշ համառոտագրումներ։

այդտեղից կողմնացույցի օգնությամբ որոշում են հորիզոնի կողմերը, տետրում նշում նրա հիմնական ուղղությունները, անմիջականորեն ծանոթանում են երկրի մակերևույթի ձևերի՝ սար, բլուր, խորշ, հարթություն և այլն, հետ և իրենց կազմած պլանում կատարում պայմանական նշումներ։ Այնուհետև, երբ անցնում են «Ջրերի բնակիչները» («Обитатели вод») թեման, աշակերտների համար դարձյալ կազմակերպվում է էքսկուրսիա և սրա հետ նաև «Որսումը ուռկանով» («Траловый лов») նկարի դիտում։ Իսկ երբ անցնում են «Դպրոցը և ընկերները» («Школа и товарищи») թեման, երեխաները գաղափար են կազմում նաև Մուրմանսկի մարզի տեխնիկումների, դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին։

Մուրմանսկ քաղաքի № 2 իգական միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանները թվով բավականաչափ շատ են։ Եվ որպեսզի 3-րդ բոլոր զուգընթաց դասարաններում հայրենագիտական աշխատանքը կատարվի կանխամտածված կերպով ու ծրագրաչափորեն, այդ դասարանների բոլոր դասատուների միջև նախապես բաժանվում են կոնկրետ հանձնարարություններ։ Ընդ որում դասատուներից յուրաքանչյուրը յուր դասարանում հայրենագիտական աշխատանքը կազմակերպում է, իրեն տրված հենց այդ կոնկրետ առաջադրանքի համաձայն։ Այսպես օրինակ՝ ըստ նախապես հանձնարարված առաջադրանքների 3-րդ ա. դասարանի աշակերտուհիները կարողացել են պատրաստել իրենց հայրենի երկրի թռչունների ալբոմ և մոլաբույսերի հերբարիումներ. բացի այդ, նրանք գրել են «Բևեռային գիշերը» թեմայի շուրջ շարադրություն։ 3-րդ բ. դասարանի դասատուի աշակերտուհիները պատրաստել են իրենց հայրենի երկրի բույսերի հերբարիումներ և շարադրություն են գրել «Մեր ծովախորշը» թեմայի մասին։ 3-րդ գ. դասարանի դասատուի աշակերտուհիները կարողացել են պատրաստել «Մուրմանսկը առաջ և այժմ» ալբոմը և շարադրություն գրել «Ստալինյան պրոսպեկտը» թեմայի մասին։ 3-րդ դ. դասարանի դասատուի աշակերտուհիները կազմել են «Բարենպաստ ծովի ձկները» ալբոմը և շարադրություն են գրել «Ձկան կազմությունը, սննդառությունը և այլն» թեմայից։ 3-րդ ե. դասարանի աշակերտուհիները կազմել են ծովային կենդանիների ալբոմ և այլն, և այլն։

3-րդ դասարանի դասատուները, հայրենագիտական աշխատանքի կազմակերպման վերաբերյալ եղած հանձնարարությունների կատարումից հետո, միմյանց հետ փոխանակում են իրենց աշակերտուհիների պատրաստած ինքնաշխատ նյութերը՝ ալբոմները, հերբարիումները, կոլեկցիաները, ինչպես նաև գրած շարադրությունները, զանազան գրառումները, գծագրումները և այլն։ Այս կերպ 3 զուգընթաց դասարանների աշակերտուհիները փոխադարձ ծանոթանում են իրենց կատարած ինքնուրույն աշխատանքների հետ։

Մուրմանսկի մարզի դպրոցներից մեկում՝ Կանդալակշի № 4 տարրական դպրոցում, 3-րդ դասարանի աշակերտների հետ «Անտառը ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ» և «Ու՞ր է գնում մեր գործարանի արտադրանքը» թեմաների շուրջը զրույց ունենալուց հետո, դասատուն նրանց տանում է էքսկուրսիա գործարան։ Այստեղ աշակերտներին ցույց է տրվում փայտի մշակման պրոցեսը։ Նրանք գործարանում կոնկրետ պատկերացում ստանալով փայտամշակման պրոցեսի վերաբերյալ, էքսկուրսիայից հետո պատրաստում են ցուցափեղկ հետևյալ վերնագրով՝ «Փայտի մշակումը»։

Մուրմանսկ քաղաքի № 2 միջնակարգ իդական դպրոցի 4-րդ դասարաններում աշակերտուհիներն իրենց հայրենի երկիրը ուսումնասիրում են ավելի հանդամանորեն։ Նրանց կատարած հայրենագիտական աշխատանքն այստեղ ավելի մեծ ծավալ է ընդունում։ Այսպես օրինակ՝ այստեղ կարելի է ներկայացնել այս դպրոցի ուսուցչուհի Օ. Պոդստանիցկայի 4-րդ դասարաններում կազմակերպած հայրենագիտական աշխատանքը։ Նրա աշակերտուհիները, թվաբանությունից կրկնելով ուսուցման երրորդ տարվա նյութը, սովորում են ամենից առաջ գծել իրենց դասարանի պլանը և ապա ծանոթանում դպրոցի պլանի հետ ու գիտում Մուրմանսկ քաղաքի սխեմատիկ պլանը։ Իսկ աշխարհագրության դասերի ժամանակ տունդրայի ու տայգայի գոտիների ուսումնասիրության կապակցությամբ նրանք ուսումնասիրում են Մուրմանսկի մարզի քարտեզը և սրան զուգընթաց կատարում նաև ուսումնա-դաստիարակչական նպատակների ծառայող ինքնուրույն աշխատանքներ։ Այնուհետև այս ուսուցչուհու աշակերտուհիները գծում են Մուրմանսկի մարզի

արդյունաբերության աճման դիագրամները, աշխատում Մուրմանսկի մարզի կոնտուրային քարտեզի, տեղագրական քարտեզի ու պլանի և գեոլոգիական (երկրաբանական) քարտեզի վրա։ Վերջին քարտեզի վրա աշխատելիս նրանք նշումներ են կատարում Մուրմանսկի մարզի օգտակար հանածոների հանույթի և մշակման վայրերը։ Նրա աշակերտուհիները իրենց կատարած ինքնուրույն աշխատանքը նյութ դարձնելով, գրում են շատ հետաքրքրական շարադրություններ հետևյալ թեմաների շուրջը՝ «Մեր քաղաքը», Մուրմանսկ քաղաքի ձկնային նավահանգիստը», «Եղջերվապահությունը» և այլն։

Այս ամենից բացի, ուսուցչուհի Օ. Պոդստանիցկայի աշակերտուհիները սիստեմատիկաբար դիտում են եղանակը և գրառումներ կատարում նրա փոփոխումների մասին, աճեցնում բնակարանային բույսեր և այլն։ Չորրորդ քառորդում նրա աշակերտուհիներն այնքան առաջ են գնում, որ անցնում են այնպիսի կարևոր թեմաների ուսումնասիրմանը, ինչպիսիք հանդիսանում են՝ «Մեր մարզի նշանավոր մարդիկ», «Մուրմանսկու մարզը հնգամյակի վերջում»։

Տարրական դասարաններում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման յուր ուսանելի փորձով ուսուցչուհի Օ. Պոդստանիցկայան միակը չէ Մուրմանսկի դպրոցներում։ Այստեղ կան հայրենագիտական աշխատանքի նմանօրինակ փորձ ունեցող այլ ուսուցիչներ ևս։ Այդպիսի ուսուցիչների շարքին է պատկանում, օրինակ՝ Մուրմանսկի № 8 իդական միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի ուսուցչուհի Ե. Դվինինան։ Յուր դասարանում նա հայրենի երկրի ուսումնասիրումը կազմակերպել է այնքան խելացի կերպով, որ նրա աշակերտուհիները կարողացել են ուսումնասիրել Մուրմանսկի պատմությունը, Մուրմանսկի կատարած դերը Հյուսիսային մեծ ճանապարհի յուրացման և Հյուսիսային Բևեռի նվաճման գործում, Մուրմանսկին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և այլ թեմաներ։ Իրենց կատարած ուսումնասիրումների ընթացքում նրա աշակերտուհիները Մուրմանսկի պատմական անցյալի, Հայրենական Մեծ պատերազմին նրա ունեցած մասնակցության, նրա արդիական կյանքի և հետագա զարգացման հեռանկարների վերաբերյալ հավաքել ու մշակել են շատ հետաքրքրական,

բովանդակալից նյութեր։ Այնուհետև նրանք գնացել են մի շարք էքսկուրսիաներ, դիտել ու հետազոտել են իրենց հայրենի երկրի բնության առանձնահատկությունները, նրա կենդանական ու բուսական աշխարհը, մետեորոլոգիական, ֆենոլոգիական և այլ երևույթները։ Իրենց հավաքած ու ուսումնասիրած նյութերի հիման վրա նրանք կազմել են ալբոմներ, կոլեկցիաներ, հերբարիումներ, եղանակի օրացույց, բնության զանազան երևույթների վերաբերյալ կատարած դիտումների օրագիր և գրել են մի շարք շարադրություններ հետևյալ թեմաների շուրջը. «Զասպելյարի մայրաքաղաքը», «Մեր քաղաքը», «Տուլոմա գետի վրա» և այլն։ Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գծով ուսուցչուհի Ե. Դելիինիայի աշակերտուհիների հավաքած ու մշակած այդ ինքնաշխատ նյութերը օգտագործվում են դասավանդման պրոցեսում և նպաստում ուսումնական ծրագրի խորն ու հաստատուն անցմանը։

Այդ մասին ուսուցչուհի Ե. Դելիինիան գրում է հետևյալը.

«Դասերի ժամանակ օգտագործելով հենց իրենց իսկ հավաքած նյութերը, երեխաները ավելի խորն ու հաստատուն կերպով են յուրացնում ծրագրային նյութը»։

Այսպիսով, մենք տեսնում ենք, թե ինչպես հայրենագիտական աշխատանքի հաջող կազմակերպումը տարրական դասարաններում նույնիսկ, մի կողմից աշակերտներին հնարավորություն է տալիս ճանաչել, ուսումնասիրել հայրենի երկիրը և այդ հիման վրա պատրաստել մի շարք ինքնաշխատ արժեքավոր նյութեր, իսկ մյուս կողմից միջոցներ է ընձեռում ուսուցչին դասավանդման պրոցեսում լայն կերպով օգտագործելու դիտողական պիտույքներ, դիդակտիկ նյութեր և ուսուցողական այլ պարագաներ։

Հայրենագիտական աշխատանքի կազմակերպումը տարրական դասարաններում պահանջում է մեծ հմտություն ու վարպետություն։ Թե ինչպես, ինչ ձևերով ու միջոցներով պետք է կազմակերպել հայրենագիտական աշխատանքը 3—4 դասարաններում, այդ մենք տեսանք վերևում Մուրմանսկի դպրոցներում այդ ուղղությամբ եղած ուսանելի ու արժեքավոր փորձի հաղորդումից։ Իսկ ինչ վերաբերում է ավելի ցածր դասարաններում (I—II) հայրենագիտական աշխատանքի կազմակերպմանը, ապա այստեղ այդ աշխատանքը պետք է կատարել ավելի մեծ հմտությամբ ու վարպե-

տությամբ։ Անշուշտ 1—2 դասարաններում ևս հայրենագիտական աշխատանքի առարկան պետք է լինի հայրենի երկիրը, հարազատ քաղաքը, գյուղը, շրջանը։ Սակայն այդ դասարաններում հայրենագիտական աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ աշակերտների ուսումնասիրման առարկան դառնան հայրենի երկրի բազմաբովանդակ կյանքի այն կողմերը և նրան վերաբերող այնպիսի հարցեր ու թեմաներ, որոնք նրանց համար ավելի դյուրըմբռնելի, պարզ ու հասկանալի են։ Բացի դրանից, հայրենի երկրի կյանքի վերաբերյալ եղած նմանօրինակ հարցերի, թեմաների ու նյութերի ուսումնասիրումը պետք է կատարվի այնպիսի ձևերով ու միջոցներով, որ դրանք այդ դասարաններում սովորող երեխաների համար լինեն հետաքրքրաշարժ, դրավիչ ու զբաղեցուցիչ։

Տարրական դասարաններում, մանավանդ 1—2 դասարաններում հայրենի երկրի ուսումնասիրման այս առանձնահատկությունների ամեն մի անտեսում կարող է հանգեցնել բացասական հետևանքի, կարող է հասցնել այն բանին, որ հայրենագիտական աշխատանքը դպրոցում կկորցնի յուր նշանակությունը և այդ դասարանների աշակերտների համար կդառնա անհետաքրքրական մի դրդ, ավելորդ մի ծանրաբեռնում։

Հայրենագիտական աշխատանքն աստիճանաբար ընդլայնվում ու ծավալվում է հատկապես բարձր դասարաններում։ 5—10 դասարաններում հայրենի երկիրն ուսումնասիրվում ու հետազոտվում է ավելի բազմակողմանի ու ավելի խորը կերպով։ Այդ դասարաններում աշակերտների կատարած ուսումնասիրումներն ու հետազոտումները ավելի լայն չափերով են իրենց շրջանակի մեջ ընդգրկում հայրենի երկրի բնությունն ու նրա առանձնահատկությունները, բնակչությունը և նրա կենցաղն ու ապրելակերպը, տնտեսական ու կուլտուրական կյանքը, պատմական անցյալը, արդիական կյանքը, նրա հետագա զարգացման հեռանկարները և ընդհանրապես այն ամենը, ինչ վերաբերում է հայրենի երկրի բազմաբովանդակ կյանքին։

Բարձր դասարաններում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ ևս Մուրմանսկի մարզի ուսուցիչները ունեն բավականաչափ արդյունավետ և ուսանելի փորձ։ Այսպես օրինակ՝

Կանդալակշի № 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհիներ Վ. Ի. Մեդվեդևայի, Մ. Ա. Ստրոկինայի և Դ. Դ. Շլեմովայի ղեկավարությամբ 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտներն ուսումնասիրել են տեղական ֆոլկլորը. նրանք գրի են առել իրենց ծնողներից ու ծանոթներից լսած թե՛ հին և թե՛ նոր պատմվածքները, հեքիաթները, առակները, դարձվածքները, երգերը, շուտերգերը և այլն։ Ուսումնական տարվա ընթացքում դպրոցում հավաքվում է շատ հարուստ ֆոլկլորային նյութ, որից սկսում են ընտրություն կատարել ֆոլկլորային ժողովածու կազմելու համար։ Ընդորում նրանք այդ ժողովածուի համար վերցնում են ժողովրդական թե՛ հին ստեղծագործությունները, որոնք ներկայացնում են շարքաշ հին կյանքի, մինչսովետական շրջանի տխուր ու անմխիթարական պատկերը և թե՛ նոր ֆոլկլորային նյութերը, որոնք արտահայտում են երջանիկ սոցիալիստական կյանքը, սովետական մարդկանց աշխատանքային ու մարտական սխրագործությունները, նրանց անսահման նվիրվածությունը դեպի մեր հզոր, սոցիալիստական Հայրենիքը և խորը ատելությունը դեպի հիտլերյան գազանները։ Տեղական ֆոլկլորի ուսումնասիրությունը դրանով չի վերջանում։ Այդ գործը շարունակվում է նաև արձակուրդների ընթացքում և ընդհանուր առմամբ կրում է տևական բնույթ։

Բարձր դասարաններում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման շատ օգտակար և ուսանելի փորձ է տվել Կիրովակ քաղաքի № 1 միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Ա. Ֆ. Բանդարևան։

Ինչպես գիտենք, Կիրովակ քաղաքը հանդիսանում է Անդրբևեռի ապատիտային արդյունաբերության օջախը, այն կենտրոնը, որտեղ պատրաստվում է մեր սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման համար այնքան կարևոր նշանակություն ունեցող ապատիտային կոնցենտրատը, և որտեղից ամեն օր մեծ քանակությամբ ապատիտ է գնում մեր երկրի բոլոր կողմերը։ Եվ ահա ֆիզիկայի ուսուցչուհի Ա. Ֆ. Բանդարևան յուր աշակերտների համար, որպես հայրենագիտական աշխատանքի օբեկտ, ընտրում է Կիրովակ քաղաքի հենց ապատիտի մշակման ֆաբրիկան։ Նա նախ և առաջ յուր աշակերտներին զաղափար է տալիս ապատիտի, նրա արտադրության, բերքատվության բարձ-

բացման գործում ապատիտային կոնցենտրատի ունեցած դերի ու նշանակության մասին, և ապա մի քանի անգամ նրանց էքսկուրսիա է տանում ապատիտի մշակման ֆաբրիկան։ Այստեղ արդեն նրանք գործնականորեն տեսնում են ապատիտի արտադրման պրոցեսը և համապատասխան նյութեր հավաքելով՝ կազմում են վերոհիշյալ ֆաբրիկայի տված արտադրանքի կոլեկցիա, որն ակնառու կերպով ցույց է տալիս ապատիտի մշակումը՝ հումքից սկսած մինչև կոնցենտրատը։ Բացի դրանից, աշակերտները կատարում են ֆաբրիկայի արտաքին տեսքի և ցեխերի ներքին կառուցվածքի գծագրերը, պատրաստում են մի շարք ցեխերի մակետները, կազմում են 60 խնդրից բաղկացած խնդրագիրք՝ ֆիզիկայի հետևյալ բաժինների վերաբերյալ. աշխատանքը, հզորությունը, էներգիան, պտտական շարժումը, ջերմությունը, էլեկտրականությունը։ Աշակերտները կազմում են նաև ֆաբրիկայի կառուցվածքի, արտադրության պրոցեսի, աշխատանքի կազմակերպման վերաբերյալ տեխնիկական տերմինների բառարան։

Ուսուցչուհի Ա. Ֆ. Բոնդարևայի աշակերտների պատրաստած այս ինքնուրույն աշխատանքները դպրոցում չեն մնում որպես սոսկ հայրենագիտական նշանակություն ունեցող նյութեր, այլ գործադրության մեջ են դրվում ուսումնա-դաստիարակչական նպատակների համար։ Նրանց պատրաստած այդ նյութերը, ինչպես նաև կազմած խնդիրները օգտագործվում են ֆիզիկայի դասավանդման ժամանակ 6, 7, 8 և 9-րդ դասարաններում։

Աշակերտների կողմից կատարված ապատիտի մշակման ֆաբրիկայի ուսումնասիրումը և դրա միջոցով ձեռք բերված նյութերի օգտագործումը դասավանդման պրոցեսում նրանց մեջ մեծ հետաքրքրություն են առաջացրել դեպի արտադրությունը և նրա տեխնիկայի տիրապետման գործը, ընդլայնել են նրանց մտահորիզոնը և հարստացրել ունեցած գիտելիքները, նրանց մեջ մշակել են մի շարք գործնական ունակություններ և ձգտում առաջ բերել դեպի մասնագիտության ընտրությունը։ Շնորհիվ Ա. Ֆ. Բոնդարևայի կազմակերպած այդօրինակ հայրենագիտական աշխատանքի, նրա աշակերտներից շատ-շատերը դեռ աշակերտական նստարանից սկսած ձգտում ունեն դպրոցն ավարտելուց հետո աշխատելու ար-

տաղրության մեջ, կամ թե շարունակելու ուսումը՝ ավելի բարձրագույն մասնագետ մարդ դառնալու համար։

Հենց այս հանգամանքն էլ շատ մեծ ուսումնա-դաստիարակչական նշանակություն ունի։ Մեծ գիտնականների և նշանավոր մասնագետների կյանքի պատմությունը ցույց է տալիս, որ նրանց մեջ շատ դեպքում սերը դեպի գիտությունն ու տեխնիկան առաջանում է շնորհիվ հայրենագիտական այն ինքնուրույն աշխատանքի, որ նրանք կատարում են դեռ դպրոցական հասակում։ Այս տեսակետից շատ ուշագրավ է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հանգուցյալ պրեզիդենտ Կարպինսկու պատմածը ակադեմիկոս Ֆերսմանի մասին։ Նա ասում է.

«Ով Ձեզանից չի լսել հռչակավոր հանքաբան, ակադեմիկոս Ֆերսմանի մասին։ Բայց Դուք գիտեք նա ինչից է սկսել։ Վեց տարեկան երեխա լինելով, նա սկսել է հավաքել քարեր, տարեց-տարի աճել է այդ քարերի քանակը. որոշ ժամանակից հետո այն վերածվել է զանազան հանքերի և հարուստ գիտական հավաքածուի, իսկ մանուկ կոլեկցիոները դարձել՝ մեծ գիտնական։ Պատահում է, որ մանուկ հասակում սիրում ես մի գործ և հետագայում այն դառնում է քո հիմնական զբաղմունքը»։

Այս նույն բանը տեղի է ունեցել նաև սովետական խոշորագույն գիտնական Միչուրինի կյանքում։ Պատանեկան հասակից սկսած նա նույնպես սիրում է հայրենի երկրի բնությունը, հետաքրքրվում է նրա բուսական ու կենդանական աշխարհով։ Այս ամենը նրա մեջ առաջացնում են հակում դեպի բնագիտությունը, և նա դառնում է մեր մեծ Հայրենիքի խոշորագույն բնագետը։

Հայրենի երկրի ուսումնասիրման գծով շատ հետաքրքրական աշխատանք է կատարվել նաև Ռոստի № 7 միջնակարգ դպրոցում։ Ինչպես այս դպրոցի դիրեկտոր Ա. Պոզդնյակովն է պատմում, իրենց ավանի պատմությունը ստեղծելու համար գործի են անցնում թե՛ դասատուները և թե՛ աշակերտները։ Նրանք նյութեր են հավաքում Ռոստի պատմական անցյալի, նրա սոցիալիստական զարգացման և այդ գործում կոմերիտական կազմակերպությունների կատարած դերի, նրա Հայրենական Մեծ Պատերազմին ցուցաբերած մասնակցության և հետպատերազմյան հնգամյակում ունե-

ցած հնռանկարների վերաբերյալ։ Նրանք ճանապարհներ են ունենում իրենց ավանի անվանի մարդկանց, ինժեներների, բանվոր ստախանովականների, պարտիական ու սովետական աշխատողների, մարզային հայրենագիտական (դավառագիտական) թանգարանի աշխատակիցների հետ։ Այս ճանապարհների ընթացքում նրանք հավաքում, ստուգում ու գրի են առնում իրենց ավանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններն ու տվյալները։ Այնուհետև աշակերտները շարադրություններ են գրում իրենց ավանի պատմության վերաբերյալ։ Այդ պատմությունը իլուստրացիայի ենթարկելու համար նրանք պատրաստում են նկարների մի ամբողջ սերիա, որը պատկերում է ավանի ստեղծանական զարգացման պրոցեսը։ Աշակերտների ձեռքով պատրաստված նկարների այս սերիան սկսվում է մի անմարդաբնակ վայրի տեսարանով և ավարտվում է այժմյան բարգավաճած ավանի պատկերով։ Բացի այդ, աշակերտները հավաքում են նաև ավանի և նավանորոգման գործարանի 150 ստախանովականների լուսանկարները։ Այս բոլորից հետո դպրոցում կազմակերպվում է հայրենագիտական ցուցահանդես, որը ուսյոնի հասարակայնության կողմից արժանանում է շատ մեծ գովասանքի։ Այս դպրոցի հայրենագիտական ցուցահանդեսի նյութերը հետագայում դրվում են նաև մարզային և համառուսաստանյան հայրենագիտական (դավառագիտական) ցուցահանդեսներում։

Իրենց հայրենի երկրի պատմության ուսումնասիրությամբ բավական լուրջ կերպով զբաղվել են նույնպես և Մոնչեգորսկու № 1 յոթնամյա դպրոցի աշակերտները։ Նրանք դրական ուսուցչուհի Ա. Վ. Ուլասովայի և ավագ ջոկատավար Կ. Ա. Նավոիչկի ղեկավարությամբ, ուսումնասիրում են Մոնչեգորսկու պատմությունը։ Նրանք այցելում են հին բնակիչների մոտ և նրանցից լսում իրենց քաղաքի առաջացման վերաբերյալ զանազան տեղեկություններ, հավաքում են հետաքրքրական նյութեր, գրի են առնում տասից ավելի հեքիաթներ ու լեգենդներ և կազմում 200 բառից բաղկացած բառարան։ Այսպիսով հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման շրջանակը դնալով ավելի է ընդլայնվում և այս կերպ հավաքվում են հայրենագիտական բավականաչափ հարուստ նյութեր, որոնց հիման վրա դպրոցում հիմնադրվում է դպրոցական հայրենագիտական թանգարան։

Հայրենի երկիրն ուսումնասիրելու և հայրենագիտական աշխատանքը ծրագրային նյութի անցման հետ կապակցելու ուղղությամբ ուսանելի փորձ ունի նաև Շարիա կայարանի № 21 երկաթուղային միջնակարգ դպրոցը*)։

Այս դպրոցի աշակերտները Շարիայի պատմությունը, նրա զարգացման պատմական ուղին ուսումնասիրում են պատմության դասատուի ղեկավարությամբ։ Սակայն մինչև աշակերտներին գործի դնելը, պատմության դասատուն ամենից առաջ ինքն է ուսումնասիրում Շարիայի պատմությունը և այս կերպ նախապատրաստվում այդ պատասխանատու աշխատանքը դյուսավորելու համար։ Նա տարբերաբար դասատուներից, տեղական հին բնակիչներից և այլ աղբյուրներից տեղեկություններ է հավաքում Շարիայի պատմական անցյալի, Վոլգա—Վյատկա գծի շինարարության, այդ գործը կատարող մարդկանց, Շարիա քաղաքի զարգացման, այն բնակավայրի բնակչության կենցաղի, վարք ու բարքի մասին, որտեղ ներկայումս տարածվում է Շարիան։ Նա այս բոլոր տեղեկություններն ու նյութերը նախ՝ գրի է առնում ու սիստեմատիզացիայի ենթարկում և ապա՝ սկսում աշխատանքը աշակերտների հետ։

Այնուհետև պատմության դասատուն յուր հավաքած ու մշակած նյութերի հիման վրա 4—10 դասարանների աշակերտների հետ Շարիայի պատմության մասին ունենում է առաջին զրույցները, որոնց նպատակն է լինում նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի իրենց հարազատ քաղաքի պատմական անցյալը։ Եվ իրոք, դասատուի այդ սկզբնական զրույցները ուժեղ ազդեցություն են գործում աշակերտների վրա և նրանց մեջ մեծ ոգևորություն առաջացնում դեպի իրենց բնակավայրի պատմական անցյալի ուսումնասիրման գործը։

Շարիա քաղաքի պատմությունն ուսումնասիրելու առաջին հանձնարարությունը ստանում են 9-րդ դասարանի աշակերտները։ Այս հանձնարարությունն աշակերտներին տրվում է այն ժամանակ, երբ նրանք պատմությունից ուսումնասիրելիս են լինում նրա այն

---

* Տես այդ դպրոցի ուսմասվար Н. Агнева „Краеведческая работа одной школы" հոդվածը „Народное образование" 1948 г. № 3.

Այստեղ դրված է այդ հոդվածի համառոտագրումը։

շրջանը, որը բնորոշ է երկաթուղիների արագ շինարարությամբ և երկաթուղային կայարանների շուրջը նոր քաղաքների առաջացմամբ։ Այստեղ հայրենի երկրի պատմական անցյալի, այսինքն Շարիա երկաթուղային կայարանի և համանուն քաղաքի առաջացման ու զարգացման ուսումնասիրումը և պատմության դասընթացից դրան համապատասխան թեմայի, որը պատկերացնում է երկաթուղիների կառուցումը և երկաթուղային կայարանների շուրջը նոր քաղաքների առաջացումը, անցումը շատ բնականորեն շաղկապվում են իրար հետ և լրացնում ու ամբողջացնում միմյանց։ Ընդ որում երբ պատմության դասընթացի տվյալ թեմայի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս հայրենի երկրի պատմական անցյալը դիտել մեր ողջ պատմական կյանքի զարգացման հետ ունեցած ընդհանուր կապակցության մեջ, ապա հայրենի երկրի պատմական անցյալի ուսումնասիրումը պատմական կոնկրետ նյութեր ու փաստեր է ընձեռում պատմության այդ թեմայի ընդգրկած ժամանակաշրջանի իրադարձություններն ավելի ակնառու դարձնելու համար։

Հայրենի երկրի պատմությունն այս տեսանկյունից ուսումնասիրելու և հետազոտելու համար աշակերտներին հարկավոր է նախապատրաստել, ընտելացնել այդ աշխատանքին. նրանց հարկավոր է տալ ինքնուրույնաբար ուսումնասիրություն ու հետազոտություն կատարելու ունակություն և հմտություն։ Հենց այդպես էլ վարվում է Շարիայի № 21 երկաթուղային միջնակարգ դպրոցի պատմության դասատուն։ Նա պատմության դասերին աշակերտներին գաղափար է տալիս 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում երկաթուղիների անման և նրանց տնտեսական կյանքում ունեցած նշանակության մասին։ Այս ուղղությամբ նրանց հանձնարարում է կարդալու, մշակելու այնպիսի հոդվածներ, ամսագրեր ու գրքեր, որոնք իրենց մեջ հետաքրքրական նյութեր են պարունակում երկաթուղիների և քաղաքների պատմության վերաբերյալ։ Սրա հետ միաժամանակ նրանց հանձնարարվում է ինքնուրույնաբար վերարտադրել կարդացած նյութերի հիմնական բովանդակությունը, հանձնարարվում է նկարագրել անցյալի նյութական կուլտուրայի հուշարձանները, առանց գրքի անմիջական օգտագործման, վերարտադրել պատմական փաստաթղթերը։ Այս և նմանատիպ այլ

աշխատանքները աշակերտների մեջ զարգացնում են պատմական անցյալը պատկերացնելու փառ երևակայություն, պատմական իրադարձությունները, դեպքերն ու անցքերը նկարագրելու, վերլուծելու և ընդհանրացումներ անելու ունակություններ։

Աշակերտներին ստեղծագործական և հետազոտական ինքնուրույն աշխատանքի նախապատրաստելուց հետո, դասատուն հանձնարարում է նրանց Շարիայի շրջանի, Շարիա քաղաքի ու երկաթուղային կայարանի մասին տեղեկություններ ու նյութեր հավաքել, գրի առնել ու դրանք սիստեմատիզացիայի ենթարկել։ Հայրենագիտական աշխատանքի կազմակերպման այս ձևը աշակերտներին հնարավորություն է տալիս պարզ հետազոտություններ ու ուսումնասիրություններ կատարելու ունակություններ ձեռք բերել։

Շարիայի շրջանի, Շարիա քաղաքի ու երկաթուղային կայարանի պատմական անցյալի ուսումնասիրման ու հետազոտման համար սահմանվում է կես տարի ժամանակ։ Աշխատանքի առաջին ամսում պատանի հայրենագետները պետք է դիմեին այն մարդկանց, որոնք պատմել կարողանային իրենց հայրենի երկրի պատմական անցյալի մասին։ Աշխատանքի երկրորդ ամսում պատանի հայրենագետներն արդեն կարողանում են մի քանի անգամ զրույցներ ունենալ տեղական հին բնակիչների հետ և իրենց օրագրերում գրի առնել Շարիայի պատմության մասին նրանցից ստացած տեղեկությունները, իսկ եթե հնարավոր է լինում նրանք գրի էին առնում նրանց բոլոր պատմածներն ու հաղորդած տեղեկությունները և այս միմյանց հետ համեմատության մեջ դնում միևնույն իրադարձության վերաբերյալ տարբեր աղբյուրներից վերցրած նյութերը և նրանցից ընտրում ավելի հավաստի ու համոզիչ փաստերն ու տվյալները։

Երկրորդ ամսվա վերջում Շարիայի պատմության վերաբերյալ պատանի հայրենագետների հավաքած ու գրի առած տեղեկությունները, տվյալներն ու փաստերը ստուգում է ինքը դասատուն և տալիս յուր գնահատականը կատարված աշխատանքի մասին։ Նա այդ տեղեկություններից, տվյալներից ու փաստերից ջոկում, ընտրում է արժեքավորները, իսկ մնացածները, որոնք կասկածելի են ու անստույգ, կամ դեն են դցում, կամ էլ թե հանձնարարում նորից ուսումնասիրելու։

Շարիայի պատմության վերաբերյալ պատանի հայրենագետների հավաքած ու գրի առած նյութերի ստուգումից հետո, դասատուն նրանց հանձնարարում է ընտրել թեմաներ գրավոր ինքնուրույն աշխատանք կատարելու համար։ Նրանք անմիջապես ձեռնամուխ են լինում գործի, ընտրում են գրավոր աշխատանքի թեմաները և անցնում նրանց մշակմանը։

Պատանի հայրենագետների գրավոր աշխատանքի համար ընտրած այդ թեմաները շատ բազմազան են։ Ահա այդ թեմաները՝

1. Վոլոգդա—Վյատկա երկաթուղու շինարարությունը։
2. Առաջին գնացքները։
3. Առաջին շոգեքարշին դիմավորելը։
4. Դեպոյի ժաբլ։ Շարիայի վրա։
5. Բանվորների կատարած աշխատանքները Վոլոգդա—Վյատկա երկաթուղու շինարարության վրա։
6. Հոկտեմբերյան վողոցի պատմությունը։
7. Ինչպես է աճել Շարիա քաղաքը։
8. Քաղաքի հարավային մասի ծագման ու զարգացման պատմությունը։
9. Շարիայի մահառականները։
10. Գյուղացիների կենցաղն ու բարքերը։
11. Երկաթուղային տեխնիկան Բուի—Սվեչի մասում առաջ և այժմ։
12. № 21 դպրոցի պատմությունը։
13. Վ. Ի. Չկալովի գալուստը Շարիա։
14. Շարիայի հանդուցակետի երկաթուղայինների պայքարը ավարիաների դեմ։
15. Մոսկվայից դեպի Շարիա (շինարարության համար որակյալ բանվորների հավաքագրման մասին), և այլ թեմաներ։

Հայրենի երկրի պատմության վերաբերյալ աշակերտների կատարած այդ գրավոր աշխատանքները դուրս եկան շատ ինքնօրինակ և ինքնուրույն։ Պատանի հայրենագետների այդ գրավոր աշխատանքներում հայրենի երկրի տնտեսական-հասարակական կյանքը, պատմական իրադարձությունները, դեպքերն ու անցքերը նկարագրված են շատ դունագեղ կերպով և ժամանակագրական հաջորդականությամբ, բնակչության կենցաղը, վարքերն ու բարքերը

նշանավոր մարդկանց բնութագրերը գրված են հետաքրքրականորեն։ Աշակերտների գրավոր աշխատանքները ստուգվում, ճշտվում ու գնահատվում են ուսուցչի կողմից, որից հետո նրանցից լավագույնները կարդացվում են դասարանում։

Այսպիսով Շարիա կայարանի № 21 երկաթուղային դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները պատմության դասատուի ղեկավարությամբ կոլեկտիվ ուժերով հավաքում ու մշակում են շատ հարուստ նյութ իրենց հարազատ քաղաքի պատմության վերաբերյալ։ Այդ աշխատանքի պրոցեսում նրանք ակնառու կերպով տեսնում են, որ սոցիալիզմի երկրի մյուս քաղաքների նման Շարիան ևս աճում ու զարգանում է տնտեսապես ու կուլտուրապես, որ Շարիան նույնպես ունի յուր պատմական անցյալը, որ նա ևս նշանավոր է յուր այն անձնուրաց և անվանի մարդկանց աշխատանքային ու մարտական սխրագործություններով, որոնք հենց իրենց այդ հարազատ քաղաքում էլ սովորել են աշխատել ու գործել սոցիալիստորեն։ Այդ պատճառով էլ նրանք սիրեցին իրենց հայրենի երկիրը, հարազատ քաղաքը։

Շարիայի մասին աշակերտների ունեցած գիտելիքներն ավելի հարստացնելու և ամրացնելու նպատակով պատմության դասատուները նրանց ծանոթացնում են նաև զարգացման այն հեռանկարների հետ, որ հայրենի քաղաքն ունի ստալինյան նոր հնգամյակում։ Ահա այս ուղղությամբ 7-րդ դասարանի աշակերտների կատարած աշխատանքի մի օրինակ. ՍՍՌՄ Կոնստիտուցիայի դասընթացի համապատասխան թեմայի ուսումնասիրման առնչությամբ այդ դասարանի աշակերտները ամբողջ ուսումնական տարվա ընթացքում տեղական թերթերից նյութեր ու տվյալներ են հավաքում Շարիայի հնգամյա պլանի մասին։ Նրանք իրենց հավաքած նյութերն ու տվյալները մշակելով ու սիստեմատիզացիայի ենթարկելով կազմում են «Շարիա քաղաքի հնգամյա պլանը», որը լայն կերպով օգտագործվում է ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի դասերին։

Բացի այդ, 7-րդ դասարանի աշակերտները մեծին երկու տարում մանրամասն կերպով ուսումնասիրել են ՍՍՌՄ-ի և ՌՍՖՍՌ-ի Գերագույն Սովետի ընտրական կամպանիաների ընթացքը նրանք այցելել են ագիտպունկտերը, ընտրական տեղամասերը և գրի առել իրենց դիտողություններն ու տպավորությունները։ Այնուհետև ի-

բենդ կատարած այդ ուսումնասիրությունից ստացված նյութերի հիման վրա գրել շարադրություններ հետևյալ թեմաների շուրջը «Ընտրության օրը Շարիայում», «Մեր թեկնածուները և հանդիպումները նրանց հետ», «№ 3 ընտրական տեղամասը», «№ 6 ընտրական տեղամասը», «Իմ աշխատանքն ընտրական տեղամասում»։ Այս կերպ 7-րդ դասարանի աշակերտները ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի դասընթացի ծրագրային նյութերի ուսումնասիրման ընթացքում և նրանց առնչությամբ կարողանում են դիտել, ուսումնասիրել ու նկարագրել նաև իրենց հարազատ քաղաքի՝ Շարիայի, կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները։

Այս կարգի հայրենագիտական աշխատանքը ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի դասընթացի դծով շատ կարևոր նշանակություն ունի դպրոցականների գաղափարական-քաղաքական դաստիարակության համար, որովհետև դրա միջոցով նրանք կապվում ու ակտիվ կերպով մասնակցում են մեր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին, ըմբռնում այդ կյանքի էությունը և ապրում ու ոգևորվում նրանով։

Շարիայի կայարանի № 21 երկաթուղային միջնակարգ դպրոցում հայրենագիտական լուրջ ու գնահատելի աշխատանք է կատարվել նաև աշխարհագրության գծով։ 7-րդ դասարանի աշակերտները աշխարհագրության դասատուի ղեկավարությամբ ուսումնասիրում ու հետազոտում են հայրենի երկրի բնությունը, էկոնոմիկայի զարգացման հեռանկարները հետպատերազմյան հնգամյակում։ Նրանք իրենց հայրենագիտական խմբակում ուսումնասիրում են մի շատ կարևոր թեմա՝ «Շարիայի շրջանի բուսական և կենդանական աշխարհը», որի վերաբերյալ ամառային և ձմեռային շրջագայումների ընթացքում հավաքում են փաստական շատ հարուստ նյութեր, ձկնորսներից ու որսորդներից լսում են շատ հետաքրքրական պատմվածքներ ձկների ու կենդանիների մասին։ Շրջագայումների ժամանակ ստացած տպավորությունները և ձկնորսներից ու որսորդներից լսած պատմվածքները նրանք գրի են առնում իրենց օրագրերում։

Ուսումնասիրելով այս և նման այլ թեմաներ, հայրենագիտական խմբակի անդամները կարողացան ճանաչել իրենց հայրենի երկրի բնությունը, ֆլորան, ֆաունան և նրա այլ հարստությունները։

Այս օգտակար աշխատանքի ընթացքում և նրա միջոցով նրանք սիրելին իրենց հայրենի երկրի բնության գեղեցկությունը։ Պատանի հայրենագետները հայրենի երկրի ուսումնասիրության կապակցությամբ իրենց խմբակի պարապմունքներում լսում և քննարկում են մի շարք զեկույցումներ շատ հետաքրքրական թեմաների շուրջը, օրինակ՝ Կոստրոմայի մարզի տնտեսության զարգացման հնգամյա պլանը. Կոստրոմա—Գալիչ երկաթուղագծի կառուցումը, Հյուսիսային երկաթգիծը, նրա աշխատանքը և նշանակությունը։

Աշխարհագրության դասատուն 7-րդ դասարանի աշակերտների հետ հետաքրքրական աշխատանք է կազմակերպում նաև ՍՍՌՄ-ի տրանսպորտն ուսումնասիրելիս։ Նա հանձնարարում է աշակերտներին նյութեր հավաքել Շարիայի երկաթուղային մասի կյանքում տեղի ունեցած նշանավոր իրադարձությունների մասին։ Նրանց այդպիսի նյութերի համար աղբյուր են հանդիսանում տեղական թերթերը ու ռադիո հաղորդումները, ծանոթ երկաթուղայիններին պատմածները։ Այնուհետև նրանք մշակում ու սիստեմատիզացիայի են ենթարկում իրենց հավաքած այդ նյութերը և ամփոփ գաղափար կազմում Շարիայի երկաթուղային մասի աշխատանքի մասին։ Այդ ուսումնասիրությունը դպրոցականների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացնում դեպի երկաթուղային կյանքը, սեր է արթնացնում դեպի սոցիալիստական աշխատանքի այդ բնագավառը։ Նրանք հպարտությամբ են խոսում Շարիայի լավագույն երկաթուղայինների ունեցած նվաճումների ու հաղթանակների մասին։

Շարիայի կայարանի № 21 երկաթուղային միջնակարգ դպրոցի դասատուները հայրենի երկրի ուսումնասիրման գործում աշակերտների հետ շատ արդյունավետ ու օգտակար աշխատանք են կատարել նաև լեզվի ու գրականության գծով։ Նրանք այդ առարկաների գծով աշակերտներին հանձնարարել են ուսումնասիրելու այնպիսի նյութեր, որոնք առնչություն ունեն ծրագրային նյութերի հետ։ Այդ կարգի ուսումնասիրումների հիման վրա աշակերտները բաղմաթիվ շարադրություններ են գրել հայրենի երկրի՝ Շարիայի վերաբերյալ։ Այսպես օրինակ՝ նրանք դիտելով Շարիայի բնությունը տարբեր ժամանակներում՝ մի շարք շարադրություններ են գրում նրա դանդաղ տեսարանների մասին։ Ահա այդ շարադրություններից մի քանիսը. «Առավոտը անտառում»։ «Ջրասանք դահուկնե-

բով», «Ուղերթ դեպի ճամբարդ», «Ամառային հուշեր» և այլն։ Բարձր դասարանի աշակերտները ուսումնասիրելով Շարիայի երկաթգծի դեպոն՝ շարադրություն են գրում հետևյալ վերնագրով՝ «Շարիայի դեպոյի ցեխերում», որում տրված է այդ սոցիալիստական ձեռնարկության պոետիկական պատկերացումը և սովետական աշխատավորների պայծառ պորտրետները, վառ կերպարները։

Անդրբևեռի դպրոցները, ծավալելով հայրենագիտական աշխատանքը, իրենց նպատակ են դնում ոչ միայն ուսումնասիրել ու ճանաչել հայրենի երկիրը, այլև օգնել աշխատավորությանը տընտեսության ու կուլտուրայի հետագա բարգավաճման համար նրանց մղած պայքարում։ Այդ տեսակետից վերին աստիճանի հետաքրքրական և ուսանելի է Կուզոմեն գյուղի յոթնամյա դպրոցի փորձը։ Այս գյուղի բնակիչները ոչ մի ժամանակ չէին զբաղվել իրենց հողերի կոնաշաղարդման գործով և շատ սկեպտիկորեն էին տրամադրված դպրոցի փորձնական հողամասի նկատմամբ։ Սակայն գյուղի բնակիչների կարծիքը շուտով փոխվում է, երբ այդ հողամասում հաջողվում է աստիճանաբար զանազան կուլտուրաներ աճեցնել։ Չնայած անբարենպաստ պայմաններին, աշակերտներին հաջողվում է փորձնական հողամասում աճեցնել ծաղիկներ, հացապտուղներ և այլն։ 1946 թվականին դպրոցամերձ այդ հողամասը դարձավ իսկական փորձնական հողամաս, ուր այդ ժամանակ արդեն աճեցվում էին մոտավորապես 60 զանազան կուլտուրաներ և ստացվում էր ամենաբարձր բերքը։ Այս փորձը օրինակ ծառայեց գյուղացիների համար։ Նրանք ևս սկսեցին մշակել իրենց հողամասերը և աճեցնել զանազան կուլտուրաներ։ Այսպիսով, աշակերտների կատարած այդ աշխատանքը օգնեց նրանց ոչ միայն խորը կերպով յուրացնելու բնագիտության դասընթացի ծրագրով պահանջվող գիտելիքները, այլև ձեռք բերել գործնական մի շարք արժեքավոր ունակություններ և այս կերպ իրենց տեսական գիտելիքները կապել գյուղատնտեսության պրակտիկայի հետ։

Ումբսկու դպրոցի աշակերտները ևս մեծ աշխատանք են կատարել բնակչությանն օգնություն ցույց տալու գործում։ Նրանք հրակայական աշխատանք են կատարել իրենց ավանի պատմությունը ստեղծելու ուղղությամբ։ Նրանք գրի են առնում տեղական բնակիչների պատմածը իրենց ավանի մասին և գրում են շրջանի տնտե-

ական-աշխատանքային ուրվագիծը. բաց են անում դպրոցական հայրենագիտական թանգարան։ Ուսումնասիրելով իրենց շրջանը և մասնավորապես Ումրա գետի օգտագործման միջոցով նրա էլեկտրիֆիկացիայի պրոբլեմը, կազմում են Ումրա գյուղի և Տերսկու շրջանի մոտակա գյուղերի էլեկտրիֆիկացիայի նախագիծը։ Այդ նախագիծը կազմված է բոլոր հաշվումներով ու գծագրերով։ Ավարտելով այդ ինքնուրույն հետազոտական աշխատանքը, աշակերտները հույս են հայտնում, որ կիրագործվի իրենց կազմած էլեկտրիֆիկացիայի նախագիծը։

Այս ամենի համար Ումրա գյուղի բնակիչները համակրանքով են վերաբերվում դեպի իրենց դպրոցը և ամեն կերպ օգնում ու օժանդակում նրան։

4. ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպես տեսնում ենք, Սովետական Միության մեջ մի շարք դպրոցներ բավական լուրջ կերպով ձեռնամուխ են եղել հայրենի երկրի ճանաչման, նրա ուսումնասիրման ու հետազոտման գործին։ Հայրենագիտական աշխատանքը նրանց մոտ ներթափանցել է դպրոցական կյանքի խորքը, նրա բոլոր բնագավառները։ Նրանք դպրոցական կյանքում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ արդեն ունեն արժեքավոր և ուսանելի փորձ։

Մեր ռեսպուբլիկայի դպրոցներում հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործը բարելավելու համար անպայմանորեն պետք է օգտագործել վերոհիշյալ դպրոցների կատարած հայրենագիտական աշխատանքի այդ արժեքավոր և ուսանելի փորձը։

Այդ դպրոցների օրինակով մեր ռեսպուբլիկայի դպրոցներում ևս հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործը պետք է կազմի դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի մի անբաժան մասը և կապված լինի ուսումնական ծրագրի անցման, նրանով պահանջվող գիտելիքների դասավանդման հետ։ Նա դպրոցականների ուսուցման ու դաստիարակման գործում պետք է հանդես գա որպես մի շատ կարևոր գործոն և իրրև այդպիսին պետք է

ժամանդակի ու նպաստի նրանց գիտելիքների հարստացման ու ամրապնդման գործին և սրա հետ մեկտեղ նրանցում դաստիարակի սովետական հայրենասիրության վեհ զգացումը, ազնիվ ու հիանալի զգացումը։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործի ունեցած այս սերտ, անբակտելի կապը դպրոցի ողջ ուսումնա-դաստիարակչական աշխատանքների հետ, խոսում է այն մասին, որ դպրոցական մյուս աշխատանքների նման, այս աշխատանքը ևս պետք է կրի ոչ թե էպիզոդիկ, սեզոնային կամ կամպանիոն բնույթ, այլ պետք է լինի շարունակական, տևական, այսինքն այն հետևողականորեն պետք է կազմակերպված լինի և կատարվի թե՛ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում և թե՛ արձակուրդային ժամանակամիջոցում։

Հայրենագիտական աշխատանքը ուսումնական տարվա ընթացքում և այդ նույն աշխատանքը արձակուրդային ժամանակամիջոցում պետք է կազմեն միմյանց շարունակությունը և լրացնեն ու ամբողջացնեն մեկ մեկու։ Ընդորում թե՛ ուսումնական տարվա ընթացքում և թե՛ արձակուրդային ժամանակամիջոցում կատարած հայրենագիտական աշխատանքի արդյունքները՝ հավաքած, գրի առած, ուսումնասիրված ու հետազոտված նյութերը, պատրաստած էքսպոնատները, կազմած հերբարիումները, կոլեկցիաները, ալբոմները, օրագրերը, ֆոտոնկարները և դպրոցականների այլ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները պետք է դասավորել, կարգավորել, համակարգել ու միատեղել և այս կերպ դպրոցում հիմնել հայրենագիտական անկյուն կամ թանգարան։

Այնուհետև հայրենագիտական աշխատանքը դպրոցում չպետք է կազմակերպել այնպես, որ այդ աշխատանքը կատարվի նեղ շրջանակում և դրա հետևանքով հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը օբյեկտ դառնա միայն մի երկու առարկայի համար։ Հայրենագիտական աշխատանքի այդօրինակ կազմակերպումը դպրոցում, այն կդարձնի շատ միակողմանի և լավագույն դեպքում հնարավորություն կտա ճանաչել հայրենի երկրի որոշ կողմերը միայն, բայց ոչ երբեք նրա բովանդակ կյանքը։ Այս կերպ կազմակերպված հայրենագիտական աշխատանքը դպրոցում կսահմանափակի դպրոցականների տեսադաշտը նեղ շրջանակով և անհնա-

բին կդարձնի նրանց գիտելիքների և ունակությունների լայն, բազմակողմանի զարգացումը։

Բացի այդ հայրենագիտական աշխատանքը չպետք է կազմակերպել այնպես, որ հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործով զբաղվեն միայն որոշ դասարանների աշակերտներ։ Այդ դեպքում ևս հայրենագիտական աշխատանքը կլինի միակողմանի, ոչ ամբողջական, որովհետև հայրենի երկիրը չի դառնա ուսումնասիրման ու հետազոտման օբեկտ ուսուցման ու դաստիարակման պրոցեսի բոլոր օղակներում՝ տարրական դասարաններից սկսած մինչև բարձր ու ավարտական դասարանները։

Մինչդեռ հայրենի երկիրն յուր բնությամբ, բնակչությամբ, տնտեսական ու կուլտուրական կյանքով, պատմական անցյալով, արդիական կյանքով և հետագա զարգացման հեռանկարներով այնքան բազմաբովանդակ է, որ հարուստ ու առատ նյութ կարող է ընձեռել դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների, ինչպես և նրա բոլոր դասարանների համար։ Այդ պատճառով էլ հայրենագիտական աշխատանքը դպրոցում պետք է կազմակերպել այնպես, որ այն կատարվի բոլոր առարկաների՝ լեզվի և գրականության, պատմության, կոնստիտուցիայի, աշխարհագրության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության և այլն գծով և որ նրանով զբաղվեն թե՛ բարձր և թե՛ ցածր դասարանների աշակերտները։

Սակայն հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը բոլոր առարկաների և դասարանների գծով պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն չվնասի դպրոցի ուսումնական ծրագրի ամբողջականությանը և չխախտի նրանով նախատեսված գիտելիքների դասավանդման բնական ընթացքը։ Ընդհակառակն, հայրենագիտական աշխատանքի շաղկապումը դպրոցական մյուս աշխատանքների հետ պետք է լինի շատ բնաբնույթ, զուրկ ամեն տեսակի արհեստականությունից, այն պետք է բխի դպրոցականների ուսուցման ու դաստիարակման գործի ամբողջականությունից. նրա ելակետը պետք է լինի դպրոցի ուսումնական ծրագրի ամբողջական անցումը, նրանով նախատեսված գիտելիքների լիամիտի դասավանդումը։ Սրա հետ մեկտեղ հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը բոլոր առարկաների ու դասարանների գծով

պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այդ աշխատանքը չմասնատվի կամայականորեն, չմանրատվի այնպես, որ այն կորցնի յուր ամբողջականությունը և դառնա դասավանդվող առարկաներից ամեն մեկի և յուրաքանչյուր դասարանում տարվող մանկավարժական աշխատանքի առանձնակի կցորդ և արհեստական հավելում։ Ընդհակառակն, հայրենագիտական աշխատանքի և դասավանդման պրոցեսի միջև պետք է ստեղծել այնպիսի կապ, որպեսզի հայրենի երկրի ուսումնասիրումներն ու հետազոտումներն առանձին առարկաների և տարբեր դասարանների գծով շաղկապվեն միմյանց հետ և այս կերպ հայրենագիտական աշխատանքի առանձին բաղադրամասերը ևս կազմեն ամբողջականություն։

Որպեսզի հայրենագիտական աշխատանքը շաղկապված լինի դպրոցական մյուս աշխատանքների հետ և կատարվի բոլոր առարկաների և դասարանների գծով, այն պետք է պլանավորել և մտցնել դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների ընդհանուր պլանի մեջ։

Նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված հետազոտումներն ու ստուգումները ցույց տվեցին, որ շատ դպրոցներում ուսումնա-դաստիարակչական աշխատանքները պլանավորում են անիսույթ, անխնամ և անուշադիր կերպով, ձևականորեն։ Ընդ որում հաճախ այդ պլանի մեջ մտցնում են ամեն բան, բոլոր տեսակի մանրուքները, բայց անտեսում են դպրոցականների ուսուցման ու դաստիարակման առաջնահերթ, կլխավոր խնդիրները, մոռացության տալիս նույնիսկ դպրոցական աշխատանքի առանձին կարևորագույն բնագավառները։ Նախորդ ուսումնական տարում դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների պլանավորումից դուրս մնացած ու մոռացության մատնված այդպիսի մի բնագավառ է եղել նաև հայրենագիտական աշխատանքը։

Այս ուսումնական տարում չպետք է կրկնել նախորդ ուսումնական տարվա այդ սխալը։ Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների պլանը պետք է կազմել կանխամտածված, կշռադատված կերպով՝ նրա մեջ ընդգրկելով դպրոցականների ուսուցման ու դաստիարակման վերաբերյալ բոլոր խնդիրները, դպրոցական աշխատանքի բոլոր բնագավառները, այդ թվում նաև հայրենագիտական աշխատանքը։

Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների այս ընդհանուր պլանից դուրս գալով՝ իրենց կատարելիք ինչպես դպրոցական մյուս աշխատանքները, այնպես էլ հայրենագիտական աշխատանքը պետք է պլանավորեն դպրոցական բոլոր աշխատողները և կազմակերպությունները՝ թե՛ դիրեկտորն ու ուսմասվարը, թե՛ դասղեկներն ու դասատուները, թե՛ մանկխորհուրդները, թե՛ առարկայական հանձնաժողովներն ու արտադասարանական խմբակները և թե՛ պիոներական, կոմերիտական կազմակերպությունները։ Հայրենագիտական աշխատանքը միայն այս կերպ կարող է ներթափանցել դպրոցական կյանքի բոլոր խորքերը և դառնալ դպրոցական բոլոր աշխատողների ու կազմակերպությունների ուշադրության առարկան։

Այստեղ խոսքը ամենից առաջ վերաբերում է ուսուցչին, որովհետև աշակերտների հետ հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործի անմիջական կազմակերպողն ու ղեկավարողը հանդիսանում է հենց ինքը՝ ուսուցիչը։

Որպեսզի ուսուցիչը կարողանա ինչպես հարկն է աշակերտների կողմից կատարվող հայրենագիտական աշխատանքը կազմակերպել ու ղեկավարել, ամենից առաջ նա հենց ինքը պետք է հետազոտի ու ուսումնասիրի հայրենի երկիրը։ Առանց ճանաչելու և իմանալու հայրենի երկիրը, նրա բնական առանձնահատկությունները, բնակչության կենցաղն ու ապրելակերպը, տնտեսական ու կուլտուրական կյանքը, պատմական անցյալն ու արդիական կյանքը, հետագա զարգացման հեռանկարները, ուսուցիչը չի կարող աշակերտների հետ հայրենագիտական և ոչ մի աշխատանք կատարել։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուր ուսուցիչ դասավանդել իմանալուց զատ, պետք է իմանա նաև յուր հայրենի երկիրը և դիտենա հայրենագիտական աշխատանք կատարել, այլ կերպ ասած, նա պետք է լինի նաև հայրենագետ։

Ուսուցչական աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր ուսուցիչներից շատ-շատերը չեն ճանաչում իրենց հայրենի երկիրը, այն շրջանը, գյուղը կամ քաղաքը, որտեղ գտնվում է նրանց աշխատավայրը՝ դպրոցը, որտեղ ապրում ու աշխատում են նրանք։ Եվ ուսուցիչների այդ անտեղյակությունը հայրենի

երկրին, ուղղակի անհնարին է դարձնում դպրոցում իսկական հայրենագիտական աշխատանք կատարելը։

Այդ պատճառով էլ դպրոցում հայրենագիտական աշխատանքը բարելավելու, ամուր հիմքերի վրա դնելու և այն բոլոր դժերով ծավալելու համար, անհրաժեշտ է, որպեսզի ամենից առաջ ուսուցիչը ինքը լրջորեն զբաղվի հայրենագիտական աշխատանքով, ձեռնամուխ լինի հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործին։ Այլապես ուսուցիչն անկարող կլինի կազմակերպել ու ղեկավարել հայրենագիտական աշխատանքը դպրոցականների հետ։

Սակայն ուսուցչի կատարած հայրենագիտական աշխատանքը դպրոցում դրանով չի վերջանում։ Նրա կողմից հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը կազմում է միայն գործի մի կողմը։ Հետևյալ հիմնական խնդիրը, որ նա պետք է լուծի, այդ հայրենագիտական աշխատանքի կազմակերպումն է դպրոցականների հետ։ Այս խնդիրը լուծելիս, այսինքն աշակերտների հետ հայրենագիտական աշխատանք կազմակերպելիս, ուսուցիչն այնպես պետք է անի, որ նրանց հաղորդի ոչ միայն իր ուսումնասիրածը, գիտեցածը՝ հայրենի երկրի մասին, այլև նրանց ևս մղի դեպի հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը, նրանց ևս կատարել տա հայրենագիտական ինքնուրույն աշխատանք։

Իսկ, որպեսզի ուսուցչի կատարած, կազմակերպած ու ղեկավարած հայրենագիտական աշխատանքն ընթանա նորմալ և համընթաց դպրոցական մյուս աշխատանքներին, պետք է կարգավորվի, պլանավորվի նրա այդ աշխատանքը։ Դրա համար էլ ուսուցիչը, հիմք ընդունելով դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների ընդհանուր պլանը՝ պետք է յուր աշխատանքի պլանը կազմի այնպես, որ նրանում պատշաճ տեղ բռնեն նաև հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման վերաբերյալ խնդիրները։ Ընդ որում ուսուցչի աշխատանքի այդ պլանում պետք է կոնկրետ կերպով նշված լինի և այն աշխատանքը, որ նա պետք է կատարի յուր հայրենագիտական գիտելիքների բարձրացման ուղղությամբ և թե այն աշխատանքը, որ նա պետք է կազմակերպի դպրոցականների հետ։

Անձամբ ուսումնասիրել ու հետազոտել հայրենի երկիրը և այդ նույն աշխատանքը կազմակերպել աշակերտների հետ, հենց այս է՝

ուսուցչի հիմնական անելիքը հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ դպրոցում։

Հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը ուսուցիչների կողմից չպետք է սահմանափակվի միայն նրանց կատարած առանձնակի աշխատանքով։ Այդ գործը նրանք պետք է կատարեն նաև առարկայական հանձնաժողովների միջոցով։ Առարկայական հանձնաժողովները, ինչպես ցույց են տալիս ստուգումները, իրենց գործունեությունը սովորաբար սկսում են ծրագրային նյութերի պլանավորումով և ավարտում ծրագրերի կատարման արդյունքների ամփոփումով։ Անշուշտ, ծրագրային նյութերի պլանավորման և նրանց կատարման, ինչպես նաև աշակերտների առաջադիմության վերաբերյալ հարցերը շատ կարևոր են, և առարկայական հանձնաժողովները դրանցով պետք է զբաղվեն լուրջ կերպով։ Սակայն սրա հետ միաժամանակ նրանց համար շատ կարևոր են նաև դասատուների գաղափարական-քաղաքական, առարկայական և մեթոդա-մանկավարժական պատրաստականության բարձրացման, նրանց դասավանդած առարկաների գաղափարական հագեցվածության և դասավանդման պրոցեսի բարելավման, ինչպես նաև հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման հարցերը։

Բանն այն է, որ առարկայական հանձնաժողովները այս հարցերի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում, իսկ հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործով դրեթե չեն զբաղվում։ Այդ պատճառով էլ հարկավոր է առարկայական հանձնաժողովների աշխատանքները այնպես վերակառուցել, որպեսզի նրանք լուրջ կերպով զբաղվեն ոչ միայն ծրագրային նյութերի պլանավորման և ուսումնական ծրագրերի կատարման, այլև դասատուների գաղափարական-քաղաքական, առարկայական, մեթոդա-մանկավարժական պատրաստականության բարձրացման և նրանց դասավանդած առարկաների գաղափարական հագեցվածության ու դասավանդման պրոցեսի բարելավման հարցերով, ինչպես նաև հայրենի երկրի ուսումնասիրության գործով։

Այստեղ խոսքը մասնավորեցնելով հայրենագիտական աշխատանքի վերաբերյալ, պետք է նշել այն հանգամանքը, որ ուսուցիչների կատարած առանձնակի հայրենագիտական հետազոտումներն ու ուսումնասիրումները պետք է հանրագումարի բերվեն, սիստե-

մավորվեն ու ամփոփվեն հենց առարկայական հանձնաժողովներում։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուր առարկայական հանձնաժողովի աշխատանքի պլանի մեջ պետք է մտցնել նաև հայրենի երկրի ուսումնասիրության վերաբերյալ հարցերը։ Ընդ որում առարկայական հանձնաժողովի աշխատանքի պլանում պետք է կոնկրետ կերպով նշված լինի ինչպես այն հայրենագիտական հարցերը, որոնք տվյալ ուսումնական տարում և արձակուրդային ժամանակամիջոցում պետք է դառնան ուսումնասիրման ու հետազոտման առարկա, այնպես էլ այն անձինք, որոնք պետք է կատարեն այդ հարցերի վերաբերյալ հանձնարարությունները։

Հայրենի երկրի ուսումնասիրումն ու հետազոտումը կոլեկտիվ ուժերով մեծապես կնպաստի դասատուների տեսական-առարկայական պատրաստականության, ինչպես և դասավանդման պրոցեսի բարելավման գործին։

Դպրոցական աշխատանքի սիստեմում արտադասարանական խմբակները ևս ունեն իրենց կարևոր դերը։ Եվ իրոք, մեզ մոտ կան այնպիսի դպրոցներ, որտեղ արտադասարանական խմբակները արդեն գտել են իրենց տեղը դպրոցում և շատ օգտակար ու արդյունավետ աշխատանք են կատարում աշակերտների գիտելիքների հարստացման, խորացման ու նրանց կոմունիստական դաստիարակության գործում։ Սակայն բանն այն է, որ այս կարգի դպրոցների հետ միասին մեզ մոտ կան նաև այնպիսի դպրոցներ, որտեղ չեն գիտակցվում արտադասարանական խմբակների դերն ու նշանակությունը և չեն պատկերացվում նրանց խնդիրներն ու անելիքները։ Այստեղ ամենից առաջ խոսքը վերաբերում է այն հայրենագիտական աշխատանքին, որ պետք է կատարվի արտադասարանական խմբակների կողմից։

Դպրոցներում շատ հաճախ արտադասարանական խմբակների ուսումնասիրության առարկա են դարձվում զուտ ծրագրային նյութերը ու տեղ չեն տրվում ոչ ծրագրային և մանավանդ հայրենագիտական այնպիսի նյութերի, որոնք կապված են ծրագրային նյութերի հետ և որոնց ուսումնասիրումը կարող է նպաստել նրանց ավելի խորը և բազմակողմանի ըմբռնմանը։ Երբեմն էլ արտադասարանական խմբակների պարապմունքները կորցնում են իրենց նշանակությունն այն աստիճան, որ վեր են ածվում դասարանական

ասվորական պարապմունքների, այսինքն կատարվում են դասի ձևով, որպեսզի հնարավոր լինի լրացնել ծրագրային նյութի թերակատարումը և անցնել չդասավանդված թեմաները։ Այսպիսով արտադասարանական խմբակների պարապմունքները դառնում են միապաղաղ ու տաղտուկ և աշակերտների մեջ հետաքրքրություն չեն առաջացնում դեպի ստեղծագործական աշխատանքը, դեպի հայրենագիտական ինքնուրույն աշխատանքը։

Արտադասարանական խմբակների աշխատանքները հետաքրքրական ու բովանդակալից դարձնելու համար անհրաժեշտ է նախ ընտրել այնպիսի թեմաներ, որոնք կնպաստեն դպրոցականների գիտելիքների հարստացմանը, խորացմանն ու ամրապնդմանը և սրա հետ միասին նրանց կդաստիարակեն գաղափարապես։ Ընդ որում այդ թեմաների ընտրության ժամանակ մեծ տեղ պետք է տալ մանավանդ հայրենագիտական նյութերին։ Այնուհետև արտադասարանական խմբակների պարապմունքները պետք է կազմակերպել այնպիսի ձևերով, որպեսզի երեխան դան ու դրսևորվեն աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվությունն ու ձեռներեցությունը։ Արտադասարանական խմբակների պարապմունքների կազմակերպման այդ ձևերը պետք է լինեն բավականաչափ բազմազան, ինչպես օրինակ զրույց, զեկուցում, ռնֆերատի ընթերցում, հարց ու պատասխանի երեկո, ցերեկույթներ, հանդիպումներ, դիսպուտներ, գրական հանդեսներ, ընթերցողների կոնֆերանսներ և այլն, և այլն։ Սակայն այդ ձևերի մեջ ընտրություն կատարելիս պետք է նկատի առնել արտադասարանական խմբակի տեսակը, նրա մասնակիցների տարիքը, պարապմունքի համար ընտրված թեման և այլ դանազան հանգամանքները։

Ինչպես տեսանք, հայրենագիտական աշխատանքը դպրոցում պետք է կատարվի թե՛ առանձին առարկաների և թե՛ տարբեր դասարանների կողմից։ Ինչպես նշվեց վերևում, հայրենագիտական աշխատանքն առանձին առարկաների դծով կատարվում է ուսուցչի, առարկայական հանձնաժողովների, արտադասարանական խմբակների և այլն կողմից։ Իսկ ինչ վերաբերում է առանձին դասարաններում կատարվող ողջ հայրենագիտական աշխատանքի կազմակերպմանը, ապա ինքնին պարզ է, որ այդ գործը պետք է կատարի դասղեկը։ Նա պետք է ուղղություն տա ոչ միայն յուր դա-

սարանի աշակերտների, այլև դասատուների կողմից կատարվող ողջ հայրենագիտական աշխատանքին։ Այդ պատճառով էլ դասընկի հիմնական անելիքներից մեկն էլ հանդիսանում է յուր դասարանում կատարվող հայրենագիտական ողջ աշխատանքի կազմակերպումն ու ղեկավարումը։ Այս աշխատանքը պետք է կազմի դասղեկի գործունեության մի կարևորագույն բնագավառը և մտնի նրա աշխատանքի պլանի մեջ։

Դպրոցում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ու ծավալման ուղղությամբ մեծ դեր ունեն կատարելու նույնպես և պիոներական ու կոմերիտական կազմակերպությունները. սրանց աշխատանքի պլանում պետք է հատուկ տեղ բռնի հայրենի երկրի ուսումնասիրության հարցը։ Այդ պլանում պետք է նշված լինեն այն թեմաները, հարցերն ու խնդիրները, որոնց շուրջը նրանք պետք է կազմակերպեն իրենց հայրենագիտական աշխատանքը թե՛ ուսումնական տարվա ընթացքում և թե՛ արձակուրդային ժամանակամիջոցում։ Դպրոցականների մեջ կոմերիտականներն ու պիոներները հայրենի երկրի ուսումնասիրման ու ճանաչման գործում պետք է լինեն առաջավոր և իրենց շնորհակալ աշխատանքով օրինակ ցույց տան մյուսներին։

Մեր ռեսպուբլիկայի դպրոցներից շատ-շատերում հայրենի երկրի ուսումնասիրության գործը մոռացության է մատնված մանկավարժական խորհուրդների կողմից, մի հանգամանք, որն անչափ բացասաբար է անդրադառնում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ու ծավալման վրա դպրոցում։ Մինչդեռ հայրենագիտական աշխատանքի ունեցած դերն ու նշանակությունը դպրոցական կյանքում խոսում է այն մասին, որ այդ աշխատանքը պետք է կազմի մանկավարժական խորհուրդների գործունեության մի կարևորագույն բնագավառը և մտնի նրա աշխատանքի պլանի մեջ։ Մանկխորհուրդները սիստեմատիկորեն, կանոնավոր կերպով պետք է ուղղություն ու ընթացք տան հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործին։ Նրանք պետք է ամփոփեն հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գծով կատարված հայրենագիտական աշխատանքի արդյունքները և դրա հետ միասին նոր հարցեր ու խնդիրներ առաջ քաշեն հետագա գործունեության համար։ Կարճ, մանկխորհուրդները դպրոցական կյանքում լինելով

մանկավարժական մտքի դարբնոցը, պետք է լինեն նաև հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման կենտրոնը։

Հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործը յուր արտահայտությունը պետք է գտնի նաև դպրոցի լաբորատորիաների, կաբինետների և մանավանդ մանկավարժական կաբինետի աշխատանքներում։

Հայրենագիտական աշխատանքի կազմակերպման գործում դպրոցին մեծ աջակցություն պետք է ցույց տան պարտիական ու սովետական կազմակերպությունները և գիտա-հետազոտական հաստատությունները։

Դպրոցներում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ հսկայական դեր ունի կատարելու մանավանդ դպրոցների գիտա-հետազոտական ինստիտուտը։ Դպրոցների համար նա հայրենագիտական աշխատանքի հարցերի վերաբերյալ պետք է կազմակերպի ոչ միայն գիտական ու մեթոդական-մանկավարժական օգնություն, այլև պետք է ամփոփի, հանրագումարի բերի, ընդհանրացնի ու գիտական մշակման ենթարկի այն բոլոր աշխատանքները, որոնք հայրենի երկրի ուսումնասիրության գծով կատարվում են դպրոցներում։ Նա հայրենագիտական հարցերի շուրջը պետք է հրավիրի կոնֆերանսներ, խորհրդակցություններ, պետք է կազմակերպի գիտա-պոպուլյար զեկուցումներ, դասախոսություններ, պետք է հրատարակի հայրենագիտական արժեքավոր նյութերի ժողովածու և այլն և այլն։

Սակայն ո՞վ պետք է կազմակերպի ու ղեկավարի հայրենի երկրի ուսումնասիրության գործը ողջ դպրոցում։ Անշուշտ, դպրոցի դիրեկտորն ու ուսմասվարը։ Եվ իրոք, դպրոցում հայրենագիտական աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման ողջ պատասխանատվությունն ընկնում է դպրոցի դիրեկտորի ու ուսմասվարի վրա։ Նրանցից է կախված ինչպես դպրոցի մյուս ուսումնադաստիարակչական աշխատանքների, այնպես էլ հայրենագիտական աշխատանքի բարելավման գործը։

Սրանից համապատասխան հետևություն պետք է հանեն դրպրոցի դիրեկտորն ու ուսմասվարը և այնպես պլանավորեն ու կազմակերպեն իրենց գործունեությունը, որպեսզի կարողանան բարելավել

դպրոցի ողջ ուսումնա-դաստիարակչական աշխատանքները, այդ թվում նաև հայրենի երկրի ուսումնասիրման ու հետազոտման գործը։

Այսպես ուրեմն, ինչպես դպրոցի ողջ ուսումնա-դաստիարակչական աշխատանքների, այնպես էլ նրա մեկ բաղադրամասը կազմող հայրենի երկրի ուսումնասիրության գործի բարելավման համար անհրաժեշտ է շարժման մեջ դնել դպրոցական սիստեմի բոլոր օղակները։ Միմիայն այս կերպ կարող է հայրենագիտական աշխատանքը ներթափանցել դպրոցական կյանքի բոլոր բնագավառները, նրա խորքերը և դառնալ դպրոցականների ուսուցման ու կոմունիստական դաստիարակման կարևորագույն գործոններից մեկը մասսայական դպրոցում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1. Հայրենագիտության դերն ու նշանակությունը դպրոցում 3

2. Հայրենագիտական աշխատանքի վիճակը մեր ռեսպուբլիկայի դպրոցներում 13

3. Մի քանի դպրոցների կատարած հայրենագիտական աշխատանքի ուսանելի փորձը 41

4. Հայրենագիտական աշխատանքի բարելավման միջոցները 60

Խմբագրեցին՝ Բ. ՆԱՋԱՐՅԱՆ

Հ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՎՖ 00630 Պատվեր № 803 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 19/XI 1948 թ.

Ստորագրված է տպագրության 4/II 1949 թ.

Տպագրական 4½ մամուլ

Պոլիգրաֆ և Հրատ. վարչության երկրորդ տպարան, Կնունյանց № 86,

Երևան, 1949 թ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող		Տպագրված է	Պետք է լինի
	Վերևից	Ներքևից		
9	8	—	խմբավորումների տեղաշարժումը՝	խմբավորումների տեղաբաշխումը՝
14	3	—	գործի կազմավորման	գործի կարգավորման
23	1	—	համալսարանի	համալսարանում
28	14	—	շրջապատող իրադրությունը	շրջապատող իրադրության
35	—	1	կազմակերպված	կազմակերպած
48	—	12	Բանդարևան։	Բոնդարևան։
51	—	13	լուրջ կերպով զգացվել են	լուրջ կերպով զբաղվել են

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0013829

170

ԳԻՆԸ ~~ՑՈՒ~~. 60կ.

ЦЕНА

12317